1895 ՄԱՐՏԻ 3 (15) ՈՒՐԲԱԹ

№ 25 — ՏԱՍՆԵՒՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ — № 25

1895 ՄԱՐՏԻ 3 (15) ՈՒՐԲԱԹ

Հրատարակվում է չորեքշաբթի, ուրբաթ և կիւրակի օրերը.
Տարեկան գինն է 10 ռուբլի, կէս տարուանը 6 ռուբլի.
3 ամսուանը 3 ռ. և մի ամսուանը 1 ռ.
Եռանձին համարը 7 կոպէկ.

Բաժանորդագրութիւնն ընդունվում է խմբագրատանը և Կենտրոնական գրավաճառանոցում.

Հասցէն՝ Тифлисъ, Редакція „Ардзаганкъ". կամ Tiflis, Rédaction „Ardzagang."

ԱՐՁԱԳԱՆՔ

Խմբագրութիւնը բաց է ամենայն օր 10—1 ժամ (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

,,ԱՐՁԱԳԱՆՔ"
ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Բաժանորդագրութիւնն ընդունվում է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Վելեամինովսկի փողոց, № 22, տուն Խանդալաժեանի) և «ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ».

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է ՏԱՐԵԿԱՆ 10 ՌՈՒԲԼԻ.

Օտարաքաղաքացիք պէտք է դիմեն՝ Тифлисъ, Редакція „Ардзаганкъ". իսկ արտասահմանից՝ Tiflis, Rédaction du journal arménien «Ardzagang».

Յայտարարութիւններ ընդունվում են հայերէն և օտար լեզուներով.

ՆՈՐՈՎ ՀԱՆԳՈՒՑԵԱԼ
ՍԵԴՐԱԿ ՆԱԶԱՐԷԹԵԱՆ ԱԼԲԵՐՏԵԱՆԻ
մարմինը՝ շաբաթ, ամսոյս 4-ին, առաւօտեան 10 ժամին Միքայէլեան հիւանդանոցից կը տարուի Վանքի Մայր եկեղեցին և այնտեղից ս. պատարագից յետոյ՝ Խօջիվանքի գերեզմանատունը։
(1—1)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հայոց Քննիչ Կօմմիսիան. Քննիչ յանձնաժողովը և Զաքի-փաշան.
Հայկական գործեր.
Փոքր-Ասիայի քրիստոնեաները.
ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.— Կախէթիան Դաղստանի հետ միացնող ճանապարհը. Ենթադրական յանձնաժողով. Նաւթային մի նոր ընկերութիւն Լօնդօնում. Երեւանից. Պետերբուրգից. Սղնախից. Աղդաշից. Նամակ Պետերբուրգից. Նամակ Ախալցխայից. Նամակ Եւպատորիայից. Հայերի փորձը Պետերբուրգի թատրոնում. Ինֆլուէնցա հիւանդութիւնը Պետերբուրգում. Տաճկական փաշաներ Օդեսայում. Պ. Մեծատուրեանի դասախօսութիւնը. «Մշակի» բանադրանքը. Սիմֆոնիական երեկոյթ.
ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ
ՏԱՃԿԱ-ՀԱՅԱՍՏԱՆ.— Նամակ Բաբերդից.
ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ.— Բագրևանդ, Ջրաբաշխ գաւառ Մ. Ս.
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.— Հայկերոյթ ի պատիւ Գօնկուրի.
ՔԱՂԱՔԱԿԱՆ
ՀԵՌԱԳԻՐՆԵՐ
ԶԱՆԱԶԱՆ
ՏԵՂԵԿԱՑՈՒ
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՅՈՑ ՔՆՆԻՉ ԿՕՄՄԻՍԻԱՆ

Ռուսական հեռագրական գործակալութիւնը հաղորդում է.

ԼՕՆԴՕՆ փետրվ. 23-ին (մարտի 7-ին), (Ռէյտէրի գործակալութիւն). համայնքների ժողովի այսօրուայ նիստին արտաքին գործոց նախարարի օգնականը յայտնեց. «Կ. Պոլսի անգլիական դեսպանն անընդհատ յարաբերութիւններ ունի ռուսաց և ֆրանսիական դեսպանների հետ և կը ձեռնարկէ համաձայնքներով պայմանաւորուած բոլոր միջոցները, որպէս զի Բիթլիսի և այլ տեղերի հայ քրիստոնեայ ազգաբնակութիւնը իրականապէս պաշտպանուած լինի»։

—

«Daily Telegraph» լրագիրը հաղորդում է, որ հայ քննիչ կօմմիսիան արդէն հաստատել է անժխտելի ապացոյցների հիման վրայ Սասունոյ կոտորածների փաստը և այժմ մնում է նորան պատասխանատուութիւնը որոշել։ Իսկ տաճիկները, յատուկ թղթակցի ասելով, ամեն կերպ աշխատում են սպառնալիքներով վախեցնել հայերին, որպէս զի նոքա ցոյց չտան ճշմարտութիւնը այն հարցուփորձի միջոցին, որ կատարում է կօմմիսիան։

—

Հայոց խնդիրը, հակառակ անգլիական լրագրների հաւաստիքին, «Le Nord» լրագրի ասելով, դեռ հեռու է որոշուելու վիճակից։ Այն արգելքների առթիւ, որոնց հանդիպում է եւրոպական քննիչ յանձնաժողովը հայաբնակ գաւառներում, մեծ պետութիւնները, որոնք շահ ունեին անդորրացնելու վրդոված գաւառները, ցայժմ անկարող են տեղեկանալու ստոյգ պատճառներին, որոնք վերջին անկարգութեանն առիթ տուին։ Ուստի և հարկաւոր է սպասել քննութեան վերջանալուն, որպէս զի հնարաւոր լինի որոշ կարծիք յայտնելու այդ առարկայի մասին։ Յամենայն դէպս անհերքելի է, որ Ռուսաստանն ամենևին տրամադիր չէ, չնայելով մի քանի լօնդօնական լրագրների հաւաստիքներին ձեռք քաշելու իւր չափաւորութիւնից և ներգործական քաղաքականութեան հետևելու հայկական խնդրի վերաբերութեամբ։

—

Կ. Պոլսից գրում են «Indépendance Belge» լրագրին, թէ քննիչ յանձնաժողովի Մուշ եղած ժամանակ, տեղական իշխանութիւններն այնտեղից գաղթեցրել են 3000 քուրդ ընտանիքներ, որոնք խառն են եղել Սասունում տեղի ունեցած անկարգութիւններին. գաղթեցնելու նպատակն այն է եղել, որ այդ քրդերը հարց ու փորձի չենթարկուեն։

ՔՆՆԻՉ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ԵՒ ԶԱՔԻ-ՓԱՇԱՆ

—

«Նովոյէ Վրեմյայում» կարդում ենք. «Լօնդօնում շատ կարևոր նշանակութիւն են տալիս «Daily Telegraph» լրագրի Մուշից Կարսի վրայով ստացած հեռագրին, մանաւանդ որ հեռագրի հեղինակը միակ եւրոպական հրապարակախօսն է, որ չնայելով տաճկական իշխանութեանց դիմադրութեանը, կարողացել է հասնել մինչև կոտորածների տեղը։ Հեռագրի բովանդակութիւնն այս է համառօտիւ, — «Զաքի փաշան ցանկանալով ծածկել իւր չարագործութիւնների հետքերը, առաջարկել է փախած հայերին նորից շինել իրենց աւերուած գիւղերի տները և միևնոյն ժամանակ խոստացել է թէ նրանց կ'օգնեն տաճիկ զինուորները։ Գէլիէկուզան գիւղում, ուր հարիւրաւոր այլանդակուած դիակներ ձգել էին մի մեծ փոսի մէջ, հանեցին և թաղեցին հողի մէջ։ Տաճկական յանձնաժողովը դիմեց ժողովրդին և առաջարկեց համարձակ և անկեղծօրէն ներկայացնել իրենց բողոքները։ Նրանցից մի քանիսը կարողացան ներկայանալ եւրոպական քննիչներին, որոնց և տուին իրենց ցուցմունքները։ Այդ ցուցմունքներին նայելով գործն այսպէս է սկսուել. — Հայերը ընդդիմութիւն են ցոյց տուել քրդերի յարձակումներին. Թաչսիմ-փաշան այդ բանի մէջ նկատել է ապստամբութիւն և հրամայել է իւր զինուորներին կոտորել հայերին։ Հայերը փախել են Անդոկ լեռը, բայց երբ խոստացել են տաճիկ զինուորների պաշտպանութիւնը, այն ժամանակ նրանցից 360 հոգի, այդ թւում և շատ կանայք, ներկայացել են տաճիկ գնդապետին, որ խախտելով այդ թշուառներին տուած խօսքը՝ հրամայել է նրանց ամենքին կոտորել և լցնել վերոյիշեալ փոսի մէջ։ Մնացածները, որոնք չեն կամեցել անձնատուր լինել նոյնպէս հալածուել են և կոտորուել։

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

—

Ռուս կառավարութեան պաշտօնական օրգան «Պրավիտելստ. Վեստնիկը» այդ վերտառութեամբ տպագրել է հետևեալը. «Անգլիական լրագրները շարունակում են նկարագրել հայկական գործերի դրութիւնը մուգ գոյներով և հաղորդում են հայերի գիւղերում քրդերի գործած գազանութեանց մանրամասնութիւնները։ «Daily News» լրագրին հաղորդում են թէ Մամուրէ-իւլ-Ազիզ գաւառը լիքն է հայերով, որոնք փախել են այն գիւղերից, որ քանդել են քրդերը. քարուքանդ են անում նոյնպէս և հայկական վանքերը. Հայ կանայք և մանուկները ենթարկվում են գազանային բռնաբարութեանց։ Ամբողջ նահանգի վրայ սարսափ է տարածում քրդական ցեղապետ Ալի-Զէքիէտը, որ յանդգնաբար մտնում է հայոց գիւղերը և պահանջում է որ իրեն փողեր տան։ Այն հայերը, որոնք չեն կարողանում գոհացնել Ալի-Զէքիէտի պահանջները, նա կոտորում է։ Քրդերի առաջակայլին յարձակմունքներից տանջուող տեղերի հայ բնակիչներն այնքան վախեցած են որ չեն համարձակվում բողոքել Կեսարիայի նահանգապետին. միայն վերջին օրերս մի քանի հայեր առանց քրդերի ցեղապետի սպառնալիքներից վախենալու դիմեցին նահանգապետին խնդրելով պաշտպանել իրենց չարագործներից։ Տաճիկ նահանգապետը միայն այնքանն արաւ որ երեք քուրդ բանտարկեց և նրանց չորս օր բանտում պահելուց յետոյ կրկին արձակեց բանտից։ Միւս կողմից հաղորդում են, որ մօտ հարիւր հայեր, մեծ մասամբ վաճառականներ, բանտարկուել և են այս օրերս բերուել Կ. Պոլիս։ Տեղական տաճիկ իշխանութիւնները զանազան խորամանկութիւններ են գործ դնում, որպէս զի արգելք լինել քննիչ յանձնաժողովին ճշմարտութիւնը պարզել։ Այսպէս օրինակ, մի քանի քուրդ ընտանիքներ մասնակից են եղել Սասունի կոտորածներին, տեղական իշխանութիւնն այդ ընտանիքներին գաղթեցրել է Դարսա, որպէս զի քննիչ յանձնաժողովի մասնակցող եւրոպական ներկայացուցիչները չկարողանան նրանց հարց ու փորձի ենթարկել և նրանցից մի բան իմանալ։ «Times» լրագրին այս օրերս հեռագրեցին Կ. Պոլսից, որ հայ վկաներից մէկը, որին հարց ու փորձ է արել Մուշի քննիչ յանձնաժողովը, ցոյց է տուել հետքեր այն վէրքերի, որ նրան հասցրել են տաճիկ զինուորները։ Տաճկական զինուորական վիրաբոյժները քննելով նոյն հային, յայտնել են թէ նրա մարմնի վրայի սպիներն առաջացել են այրուելուց և ոչ թէ սուիններից։ Քննութիւնը գրեթէ ամենևին առաջ չէ գնում, որովհետև ամեն քայլում դժուարութիւնների է հանդիպում»։

ՓՈՔՐ ԱՍԻԱՅԻ ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐԸ

(«The Daily News», մարտի 4)

—

Հեռագիր մեր յատուկ թղթակցից.

Կ. Պոլիս, մարտի 2.

Մարաշի ամերիկական միսիօնէրները, որոնցից երկուսը Բրիտանեան հպատակներ են, տագնապալից դրութեան մէջ են։ Հալէպի նահանգի գլխաւոր կառավարիչը յայտարարելով, թէ ապստամբական դիտումների մէջ մեղաւոր է համարում նրանց, հրամայել է բանալ նրանց բոլոր նամակները և ուղարկել քննութեան համար Հալէպ՝ յառաջ քան յանձնուելն տէրերին. իսկ նրանց հասանելի արկղները, որոնց մէջ ուտեստ ու հագուստ էր դրուած, խուզարկել Մարաշի ոստիկանութեան ատենում, թէպէտև արկղներն արդէն հետազօտուած են նահանգի սահմանը մտնելիս՝ Ալէքսանդրէտտայում։

Մարաշի ոստիկանութեան պետն այդ հրամանն ստանալուն պէս գրաւեց միսիօնէրներին հասանելի արկղները, բանտարկեց այդ արկղները ծովեզերքից տանող ջորեպաններին, իբր թէ յանցաւոր լինէին, և մի քանի անգամ հրապարակաւ յայտարարեց, թէ միսիօնէրները զէնքեր են ներս բերել ահագին քանակութեամբ և իրենց տներում թաքցրել իսլամների դէմ գործածելու համար։ Հետևաբար, մոլեռանդ ամբոխը, որ արդէն գրգռուած էր հայոց դէմ պաշտօնական թիւրքերի ձեռքով, այժմ բորբոքուած է միսիօնէրների դէմ։ Եթէ Հալէպի ընդհանուր կառավարչի և նրա արբանեակների աբարքը չխափանուի, ամեն մի րոպէ կարող են չարաշուք աղէտներ յառաջ գալ։

Այնթաբի կայմակամը հրաժարուեցաւ ձերբակալել այդ քաղաքի հայերին, պնդելով թէ նրանք ապստամբներ չեն։ Ուստի Հալէպի վալին պահանջեց հեռացնել նրան պաշտօնից, պատճառելով թէ կայմակամը շատ ներողամիտ է դէպի հայերը։

—

ՔՆՆԻՉ ԿՕՄՄԻՍԻԱՆ

Ռէյտերի հեռագ. Կ. Պոլիս, մարտի 2.

Այստեղ ստացուած են հեռագիրներ Մուշի քննիչ կօմմիսիայից։ Արդէն հարցուփորձուած են բազմաթիւ քիւրդեր, սակայն նրանք ոչ մի կարևոր բան չեն պարզել։ Կօմմիսիան սպասում է այժմ մի քանի նշանաւոր հայ վկաների գալստեան երդուումից. դրանք բոլորն էլ բուն Սասունցիք են։ Կօմմիսիայի առաջին տասնևերկու նիստերի արձանագրութիւնները պահուած են իբրև դօկումէնտներ։ Դրանք գլխաւորապէս պարունակում են իրենց մէջ թիւրք վկաների ցուցմունքները, որոնց էական մասն արդէն յայտնի է, և կենդանի գոյներով պատկերացնում են հայերի Անդոկ սարից հալածուելուց առաջ տեղի գտած դէպքերը։ Հայերն այդ սարերի վրայ էին պատսպարուել թիւրք զինուորների երեսից, և այդտեղ մի քանի օր սաստիկ պատերազմ էր մղուել, ուր և կատարուել էին աշխարհագոյժ կոտորածները։ Այժմ թիւրք պաշտօնեաները այլ ևս արգելքներ չեն դնում այլազգի նուիրակների դէմ, երբոր դրանք առաջարկում են իրենց կարևոր համարած վկաներին քննել։

ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ԲԱԳՐԵՒԱՆԴ, Ջրաբաշխ գաւառ, Մ. Ս. Հայկունի, տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի.

Հայրենիքը սիրում են նրանք, որոնք ճանաչում են նրան, որոնց ծանօթ է նրա հողն ու ջուրը, նրա օդն ու ծաղիկը, նրա լեռն ու հովիտը, նրա կեանքը՝ իւր բոլոր մեծ ու մանր հանգամանքներով։ Ուրիշ է բոլորովին օտար ճանապարհորդի նկարագիրը, ուրիշ է տարագրուած պանդուխտի հայրենեաց նկարագիրը, նրա յիշատակները, նրա բերկրանքը, նրա արտասուքը։ Վերջին ժամանակներս մեզ բազմաթիւ յօդուածներ են պատահում, որոնք յաւակնութիւն ունին մեր կեանքի նկարագիրը համարուելու... Միւս կողմից մենք հանդիպում ենք բազմաթիւ երկերի, որոնց մէջ կրկնվում են հայրենիք և հայրենի աշխարհ բառերը, բայց կրկնվում են կարծէք ձևի համար, որովհետև գրողներից շատերը նրա սահմանների վրայ անգամ գաղափար չունին, ուր մնաց թէ նրա հողի, ջրի, օդի, բնութեան, մարդկանց բարքի, սքանչելի քների և վշտերի մասին։

Ո՛րքան հարուստ է այն աշխարհը, որ Հայաստան է կոչվում, ո՛րքան առատ նիւթ է տալիս նա ոչ միայն գիտնական ուսումնասիրողին, այլ նոյն իսկ պատահական անցորդին, որ այս կամ այն մարգի կողքից մի ծաղիկ է կտրում։ Եթէ նրա իւրաքանչիւր գաւառն ուսումնասիրուէր, մի սքանչելի գրականութիւն կը ստացուէր, բայց նոյն իսկ նրա մի գաւառը հատորների նիւթ է մատակարարում։

Պ. Ս. Հայկունին իւր աշխատութիւնը նուիրել է իւր հայրենի գաւառին՝ Բագրևանդին, որ այժմ Ալաշկերտ է անուանվում։ Այդ աշխատութիւնը գիտնական ուսումնասիրութիւն չէ, նրա նիւթերը որոշ սիստեմի և կարգի չեն ենթարկուած, այլ՝ ինչպէս ինքը հեղինակը իւր գեղեցիկ ուղերձի մէջ ասում է, «ծաղկանց մի կապոց» է, որ ինքը հաւաքել է «հայրենեաց մի անկիւնէն, Բագրևանդայ լեռներէն ու դաշտերէն, սարերէն ու ձորերէն»..

Այդ սրտաբուղխ, ոգևորուած ուղերձը նուիրուած է Հայոց Վեհափառ Հայրիկին և այնքան զգայուն ոգով է գրուած, այնքան ճիշդ է նկարագրում Հայոց Հայրիկի սէրը դէպի հայրենիք և նրա պանդուխտ զաւակները, այնքան ճշգրիտ պատկերացնում է գաղթական հայերի և նրանց խնամող ձեռքի յարաբերութիւնները, այնքան մտածմունքների տեղիք է տալիս, որ մենք գրքի վրայ խօսելուց առաջ այստեղ ամբողջովին առաջ ենք բերում այդ ուղերձը։ Ահաւասիկ.

ՈՒՂԵՐՁ ԱՌ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԻԿՆ ՀԱՅՈՑ

Բարեհաճեցէք Ձեր ծաղկազարդ բուրաստանի մի անկիւնը զետեղել զայս անշան կապոց, զոր քաղած եմ Ձեր սիրած և յարգած հայրենեաց մի անկիւնէն, Բագրևանդայ լեռներէն ու դաշտերէն սարերէն ու ձորերէն, որ փոխանակ դալար ու ծաղկափթիթ ընծաներով առ Ձեզ ներկայացնելու, կազմած եմ զայս չորացեալ և փշալից խուիներէ, հաւաստելով հանդերձ՝ որ Հայրենեաց փուշն և խուի հաճելի են Ձեր Վեհ ոգւոյն։

Երկս որ շնորհ գտաւ Ձեր առաջ ի լոյս աշխարհ հրապարակ գալու, նա ինձ կը յիշեցնէ, Վեհափառ Հայրիկ, որ Բագրևանդայ հայոց կեանքը միշտ գաղթականութեամբ անցած է, ուստի դարէ ի դար հարիւրաւոր և հազարաւոր ընտանիքներ գաղթած են. այլ և այլ բարբարոսական հեղեղներ մղած են Բագրևանդէ դուրս և ո՛վ գիտէ, ի՛նչ քստմնելի սպառնալիքներու պատահած լինելով՝ տեղի տուած և աւերակ ու ամայի թողած են քաղցրահամ աղբերակներու շուրջը տարածած շէն գիւղօրայք և քանի՛ քանի գրաւիչ, պատուական պաւառակներ։

Գաղթականութիւնը՝ որչափ կը յիշեմ, միշտ վտանգաւոր եղած է Լենկթեմուրեան կոտորածէն ևս առաւել։ Հայրենի հողէն խլուած ծառի պէս արմատ չէ կարողացած արձակել նոր տնկուած հողի մէջ, վաղ թէ ուշ չորացած է, նամանաւանդ երբ ունեցած չէ խելահաս պարտիզպան, որ գոնէ մեծ խնամ տանելով մի քանի բողբոջներ աճեցնէր։

Արդ, Վեհափառ Հայրիկ, թողլով անցեալի սրտառուչ անցքերը՝ ուշս դարձուցած եմ 1893—1895-ը դեռ շարունակուած գաղթականութեան վերայ, որ ներկայ բարբարոսութիւնը գերազանցած գտնելով՝ մեծ հոսանք մի կազմեցին, որպէս զի բարեկարգ Ռուսական երկրին մէջ անվրդով ապրին։ Սակայն, Վեհափառ Հայրիկ, որչափ որ այդ եղկելի ժողովուրդն կեանք պիտի վարէր, հաց պէտք էր՝ իւր քաղցն յագեցնելու համար։ Բարեբաղդաբար սոյն այս գաղթականութիւնը, որ թէև արեան ծովէ անցած, սակայն հասած վայրն ունէր Հայրիկը, որ պիտի մխիթարէր զինք, որպէս և մխիթարեց։

Ահա այս յիշատակին համար ցանկանալով կը ցանկանայի փոքրիկ արձագանք մի տալ, այն հազարաւոր գաղթականներու մխիթարական ձայնը մշտատև պահելու համար մշտախօս մի արձան կանգնել. սակայն այդ մեծ գործ կը թողում մեծ մարդերու, ես պարտաւորութիւն կը զգամ, զոր ինչ տեսած և զգացած եմ, այսօր զետեղել, որով կարի բաղդաւոր կը համարիմ զիս, Բագրևանդ անուն երկոյս նախադուռն Հայոց Հայրիկի մի մեծ բարեգործութիւնով զարդարել։

Առիթն եկաւ, ո՛վ Դիտապետդ Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ և Հայրիկդ Հայոց, թոյլ տուէք, խնդրեմ, որ յայտնեմ քանի տողով թէ ներկայ տարագրեալ գաղթականներն ո՛րպէս խնամ գտան Ձեր գուրգուրանաց ներքոյ, և թէ որպէս այն թշուառացեալ հայերու արենաշաղախ և խոնջեալ անդամներն կորով ստացան, նա և թէ ո՛րպէս որոց հեծկլտանքը մեղմացան։

Սոյն տարագրեալ գաղթականք, որք գանասար գայլերու վոհմակներու ճիրաններէն հազիւ զերծած, որք ի կորուստ մատնած տուն և տեղ, հարստութիւն և հայրենի ամենաքաղցր վայելչութիւն, զրկուած զաւակէ, հօրմէ, եղբօրմէ և սիրելի բարեկամներէ, բիւրաւոր հառաչանքներով տոչորուած՝ մի յուսոյ աստղ իւրեան առաջնորդ բռնած՝ չուէին ու հոգին բերանն առած՝ հևալով կը դիմէ փրկարար Մասիսն, կը դիմէ իւր Հայրիկի դուռը բաղխելու, իւր սրտի ծանրածանր ցաւերը Հայրիկի առաջ պարզելու, իւր արենալից անդամներն զօրովագութ հօրդ բարձր Ատենին ներկայացնելու և դարման խնդրելու իւր անկշռելի, անտանելի ցաւոց համար։

Սակայն դուռդ բաղխելու հարկ չը կար, Վեհափառ Հայրիկ, նա արդէն կրնկան վերայ բաց էր, վիրաւորեալ զաւակունքդ առանց արգելքի ներս սլոտէ խուժէին։ Նոքա արդէն վաղուց ճանաչած էին թէ իւրեանց գթոտ Հայրիկը բազմած է Հայոց Հայրապետաց Ս. Գահի վերայ, ուստի խնամ կը տարածէ իւր հալածեալ և զրկեալ որդւոց վերայ։

Հասու եմ ես, Հայրիկ, և գիտեմ թէ քանի՜ հազարաւոր թշուառացեալ հայեր մխիթարութիւն գտան Ձեր գթասրտութեան առջև, ո՛րչափ հեծկլտանքներ ու հառաչանքներ դադար գտան. ես որ բաւեր շրջագայելու համար միշտ զգոյշ եղած եմ, ես որ շօշափելով շօշափած եմ տարագրեալ պանդուխտի կեանքը և գրեթէ որոց աղետալի և անպատմելի կեանքին մասնակից, որոց սրտի խորն թափանցելով թափանցած և հասու եղած եմ թէ ինչ էր նորա կեանք նաև Վեհարանի այն նուիրական դրան մօտ այս մասին անցած և դարձած են. և որով ամենա-

Վիեննա, մարտի 3.

Այստեղ ստացուած լուրերին նայելով, խիստ վերահսկողութիւն է նշանակուած մի քանի Պօլսաբնակ հայ մահմեդականների վրայ, որոնք գաղտնի կերպով մատնուած են իշխանութեան։ Բազմաթիւ տներ խուզարկուեցան, բայց ոչ մի ի յանցանս համարելի բան չգտնուեցաւ։

Ս. Պետերբուրգ, մարտի 2.

Հայոց Կաթողիկոսը Նովօրոսսիյսկի հայերի կողմից ցնծութեամբ ընդունելուց յետոյ՝ անմիջապէս ճանապարհ ընկաւ դէպի Եկատերինօդար։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«Նով. Օբօզր.» հաստատ աղբիւրներից լսել է որ կարճ ժամանակից յետոյ Սագխենինի բարձրաւանդակով պիտի խճուղի անցնի, որ միացնելու է Կոխեթեան Դաշտոնի հետ։ Այդ ճանապարհի շինութեանց հարցը վճռուած է դեռ երկու տարի առաջ և պետական խորհուրդն այժմ յատկացրել է 300,000 ռուբլի սկզբնական ծախսերի համար։ Նոր ճանապարհը կանցնի զուգահեռական գծով ռազմավիրական ճանապարհի հետ։

* * *

Կովկասեան առևտուրը բարուոքելու և առևտրական ձեռնարկութիւնները բազմացնելու և գիւրացնելու համար՝ մտադրութիւն կայ Թիֆլիզում հիմնել առևտրական յանձնաժողով։

* * *

Մայրաքաղաքի լրագրները հաղորդում են որ Լօնդօնում մի ընկերութիւն է կազմուել Ռօդշիլդի նախաձեռնութեամբ Այդ ընկերութիւնը մեծ քանակութեամբ նաւթային հողեր է ձեռք բերել Գրօզնայում և պիտի պարապէ նաւթի արդիւնաբերութեամբ։

* * *

ԵՐԵՒԱՆԻՑ գրում են «Նով. Օբօզ.», որ այդ նահանգում աւազակութիւնները և կողոպուտները շատ յաճախ են պատահում. տեղական նահանգական իշխանութիւնը մտադիր է Սուրմալուի և Երևանեան գաւառներում ճանապարհների պահապան ձիաւորներ նշանակել։

* * *

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ մեզ գրում են.

—Ամսոյս 19 ին բացուեց այստեղ տպաբանական գործի առաջին ցուցահանդէսը. Այդ օրը ժողովրդի համար փակ էր ցուցահանդէսը. կային միայն հրաւիրեալներ, մեծամեծներ և Մեծ Իշխան Կոնստանդին Կոնստանդինովիչը. Կայսրը՝ Ալէքսէյ Միխայլովչի մահուան պատճառաւ յետաձգել է իւր այցելութիւնը։ Երբ ցուցահանդէսի օրհնութեան հանդէսը վերջացաւ և մի քանի ճառեր արտասանուեցան, Մեծ Իշխանն սկսեց մանրամասն ծանօթանալ էկսպօնատների հետ։

Ժամը 4-ին Նորին Կայսերական Բարձրութիւնը մօտեցաւ Ս Էջմիածնի տպարանի վիտերինային։ Այստեղ ցուցահանդիսի նախագահ պ. Գօլիկէն խնդրեց պ. Նիկ. Բերբերեանցին, որպէս Ս. Էջմիածնի տպարանի ներկայացուցչին, տալ Մեծ Իշխան Կոնստանդին Կոնստանդինովիչին հայոց տպարանի մասին հարկ եղած բացատրութիւններ։ Պ. Բերբերեանը հաղորդեց Մեծ Իշխանին Ս. Էջմիածնի տպարանի պատմութիւնը. Մեծ Իշխանն առանձին ուշադրութեամբ քննեց հայոց նօտաները, ապա իւր գոհունակութիւնը յայտնելով, անցաւ միւս էկսպօնատները։

* * *

ՍՂՆԱԽԻՑ հաղորդում են տեղական լրագրներին որ այնտեղ կարմրուկ հիւանդութիւնը շատ խիստ կերպարանք է ստացել. վերջին հինգ օրերի ընթացքում կարմրուկից մի քանի մահուան դէպքեր են եղել։

* * *

ԱՂԴԱՄԻՑ գրում են «Նով. Օբօզր.»-ին. «Վերջին օրերս չարագործութիւնները բազմացել են մեր գաւառում. դեռ չխօսելով Էֆէնտի-Մօլլալի յայտնի կողոպտման մասին, որ երեք ժամից աւելի է տևել, յիշեմ մի քանի ուրիշները։ Նուխուայ գաւառից երեք ձիաւորներ մորթել են Ղարաբաղցի երեք հայ։ Մի քանի օր սրանից առաջ Կարադաղլի-Պադարում քշել են գիւղացոց տաւարը, հրացանաձգութիւնը երկու կողմից տևեց մի ժամից աւելի, բայց այդ մասին յայտնուեց միայն հետևեալ օրը։ (Կարադաղլի-Պադարումն են ապրում վարչական և դատարանական պաշտօնեաները)։ Այստեղ չեմ ուզում երկար գրել անասուն գողանալու սովորութեան վրայ, այսքանը միայն ասեմ որ իւրաքանչիւր անասնատէր մի քանի անգամ յետ է գնել իւր տաւարը գողերից։ Եւ այս բոլորը կատարվում է բացարձակ, յայտնի»։

* * *

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, փետրվարի 25 ին.

(Թղթակցութիւն „Արձագանքի")

—

Հինգշաբթի, փետրվարի 23 ին Կրեդիտային ընկերութեան դահլիճում տեղի ունեցաւ հայ յայտնի երգիչ պ. Ն. Շահլամեանի կօնցերտը։

Դահլիճը լի էր ընտիր հասարակութեամբ։ Կօնցերտի ծրագիրը կազմուած էր մեծ ճաշակով։ Բացի Շահլամեանից նրա կօնցերտին մասնակցում էին կայսերական դրամատիկական Թատրոնի դերասանուհի օր. Տօմասսէն, օր. Ջիմանովսկայա, տեղիս իտալական օպերայի յայտնի երգիչ պ Կոտօնի և պ. Մարկէ։ Մասնակցելու էր նոյնպէս Թիֆլիզի հասարակութեան նախկին սիրելին պ. Տարտակովը, բայց դժբաղդաբար ինֆլուէնցան արգելք եղաւ երգչին։

Պ. Շահլամեանի բեմ դուրս գալուն պէս դահլիճը թնդաց երկարատև ծափահարութեամբ։ Մեր համակրելի երգիչը այս երեկոյ առանձին յաջողութեամբ էր տիրապետում իւր ձայնին—դուք զմայլվում էիք լսելով նորա թաւշային pianissimo-ն, իսկ fortissimo ն իւր ուժգնութեամբ թէ հիացում և թէ զարմանք էր պատճառում ձեզ։ Առանձին յաջողութիւն ունեցան նորա երգեցողութեան մէջ «Պաէացի» և «Եւգենիյ Օնեգին» օպերաներից երգած հատուածները. իսկ դուէտը, որ երգեց պ. Կոտօնիի հետ կատարեալ հիացում պատճառեց հասարակութեան։

Ներկայ ուսումնական տարեշրջանում չէ եղել մի ուսանողական երեկոյթ, որին պ. Շահլամեանը մասնակցած չլինի, և միշտ էլ մեծ յաջողութիւն է ունեցել։ Մօտ օրերս Անտառային ճեմարանի ուսանողների երեկոյթին նա արժանացաւ անվերջ ծափահարութիւնների և բուռն օվացիաների. իսկ փետրվարի 2-ին, կարելի է ասել, հասարակութիւնը վերջնականապէս արտայայտեց իւր սէրը և համակրանքը դէպի տաղանդաւոր երգիչը։ Այդ սիրոյ և հիացման արգասիք պէտք է համարել և այն մի քանի թանկագին ընծաներն ու երկու դափնեայ պսակները, որ նա ստացաւ հասարակութիւնից։

Մուտքը կարելի է հաշուել մօտ 3000 ռուբլի։

Ներկայումս պ. Շահլամեանը երիտասարդ ռուս երաժշտապետ պ. Կազաչէնկո-յի հետ մշակում են մեր ժողովրդական և ազգային երգերը։ Պ. Կազանչէնկօն մտադիր է գրել նաև մի օպերա հայոց կեանքից։

Յոր. 2—Ն։

* * *

ՆԱՄԱԿ ԵՒՊԱՏՕՐԻԱՅԻՑ

—

Պ Խմբագիր.

Կը խնդրեմ, յոկ ճշմարտութեան և արժանաւոր մարդկանց խրախուսելու համար, մի զլանաք Ձեր պատուական լրագրի մերձակայ համարներից մէկում տեղ տալ՝ մեր նամակին եթէ կարելի է անփոփոխ հրատարակել և անունս ու ազգանունս էլ յայտնէք, որ կասկած չընկնի ուրիշի վերայ։

Պարտք կը համարեմ հրապարակաւ շնորհակալութիւն յայտնել իմ կողմից տեղիս եկեղեցու երէցփոխան պարոն Պօղոս Յովհաննիսեանին հետևեալ գործերի համար։ Նա երրորդ տարին է, որ երեց փոխանական պաշտօնումն է, և ահա նորա գործերը. 1) եկեղեցու ծանկը—կըտուրը քայքայուած լինելով կաթում էր, երէցփոխը առաջի տարուայ մէջ բոլորովին մաքրել տուեց. ինչ տեղ, ինչ հարկաւոր էր նորոգուեցաւ, կոտրուած կըղմինդների տեղ նորերը դրուելով, վերանորոգուեցան. կաթուղիկէի զանգակատան երկաթեայ թիթեղները ներկուեցան, ինչպէս և դռները, լուսամուտները և պատերն էլ սպիտակուեցան. 2) եկեղեցու դրսի բակի նեղ ու կառքեր չանցնող դուռը լայնացնել տուեց ու սորանով կարելի եղաւ կառքով արձակ համարձակ մտնել-ելնել, որ շատ դիւրութիւն է. 3) եկեղեցու կրպակների, քահանայի բնակարանի կտուրներն ևս կարգի բերուեցան. ի հարկէ նախապէս էլ կօնսիստորիայից հրաման ստանալով. Կրպակների առաջի ծանկոյթներն ոստիկանական իշխանութեան հրամանով հարկաւոր էր կամ բոլորովին վերցնել, կամ փայտեայ սիւներին փոխարինել—քարեայ սիւներով. պարոն երէցփոխը վերջինն ընտրեց. 4) Եկեղեցու գումարը չբաւականացաւ, նա դիմեց ժողովրդին, որի օգնութեամբ շինել տուեց դիակառքի համար սրահ. 5) եկեղեցու ընդարձակ բակում պարտէզ տնկել տուեց իւր սեպհական ծախքով, թէ որ նայուի, հոգ տանող լինի առաջ պէտք է երթայ։ Այս բաւական չէ. նա եկեղեցու ներքին բարեկարգութիւնն էլ անտես չարաւ. այսպէս քահանային զգեստ տիրացուներին շապիկներ կարել տուեց. Ջահերը մաքրուեցան, հին վարագոյրը փոխուեցաւ. նա տնէ տուն ընկած կանանցից փող հաւաքեց և կարել տուեց 60—70 մանէթանոց մի գեղեցիկ վարագոյր. Մի կողմ թողնենք, որ նա իր եռանդուն աշխատութեամբ ուրիշներին էլ օրինակ դառաւ. այնպէս գտնուեցան բարի մարդիկ, որոնցից մէկը պարտէզը շրջապատել տուեց, ոմանք էլ եկեղեցու օգտին սրբերի պատկեր ու կանթեղներ ընծայեցին։

Նա ինչպէս և՛ հոգաբարձու և՛ (Եւպատորիայի դպրոցի շինուելու և դպրոց ունենալու առաջի շարժառիթ այս պարոնն էր, որ այն ժամանակ երեցփոխ չէր) իրաւասու, այս վերջին ամիսներու կարողացաւ ցոյց տալ, որ յիրաւի դպրոցի վերայ էլ է մտածում և միևնոյն ժամանակ իր բռնած դիրքից էլ կարող է օգուտ քաղել. այսպէս նա առաջարկել էր քաղաքային վարչութեան ժողովին որ վարչութիւնը հայոց դպրոցի աղքատ աշակերտներին օգնէ. խնդիրը յարգուած է և այս տարուանից դպրոցն ստանալու է իւրաքանչիւր տարի 50 ռ։ Սա էլ Եւպատորիայի հայ հասարակութեան մէջ առաջի օրինակն է, եթէ հետևող լինի ես յոյս ունիմ, որ դուման 100 ռ. էլ կը տայ։

Այժմ երեք տարին լրանալու մօտ է ի հարկէ մեր կարծիքով նորից պ Յովհաննիսեանին են ընտրելու, տայ Աստուած, որին էլ ընտրէին, աւելի օգտակար լինէր մեր եկեղեցու և սորա քոյր նորահաստատ դպրոցին։

Յովէփ Սէմէրճեան։

24 Ն փետրվարի 1895 Թ.
Եւպատորիա։

* * *

Պետերբուրգի մայրաքաղաքի թատրոնում վերջին օրերս կայացել է սովորական յուբիլէյ փուլէ., որին ի միջի այլոց մասնակցել են երկու հայազգի երգիչներ՝ պ. պ. Այվազեանց (տէնօր) և Եղիազարեան (բարիտօն). Ինչպէս հաղորդում է «Նով. Վր.» նրանցից միայն պ. Այվազեանն է երկու յաջող համարներ երգել։ Պ. Այվազեանն անծանօթ չէ Թիֆլիզին և նրա երաժշտական տաղանդը պատահմունքով է յայտնուել, երբ նա իբրև փականագործի աշկերտ բանում էր Միքայէլեան փողոցի մի արհեստանոցում, որի վերևի յարկում ապրում էր երգիչ տէնօր Լօդին։ Մի օր պ. Լօդին լսում է ներքևից մի գեղեցիկ ձայն և իջնելով տեսնում է որ երգողը երիտասարդ փականագործն է. սկսում է նրան դասեր տալ և մի քանի ժամանակից յետոյ տանում է իր հետ Պետերբուրգ։ Եւ ահա այժմ պ. Այվազեանն արդէն ուսումնաւարտ երաժիշտ է և այսօր վաղը ցոյց կըտայ իր տաղանդը բեմի վրայ։

* * *

Ինչպէս յայտնի է հեռագրներից այժմ Պետերբուրգում և նրա շրջակայքում սաստիկ տարածուած է ինֆլուէնցա հիւանդութիւնը, որ արդէն համաճարակի բընաւորութիւն է ստացել։ Մայրաքաղաքի լրագրները հաղորդում են, որ մի քանի տեղեր հիւանդների թիւն այնքան շատ է որ տեղական դեղատները հազիւ են կարողանում դեղ հասցնել։ Բժիշկները դիտել են, որ հիւանդութեան առաջին նշանները երևացել են յունվարի կիսին, երբ սառնամանիքը հասնում էր 20 աստիճանի հիւանդութիւնն այդ կողմերն սկսվում է հարբուխով և հիւանդի ձայնը կտրվում է. շատ անգամ հիւանդութիւնը բարդվում է և փոխվում թոքերի բորբոքման։ Հիւանդանում են թէ հասակաւորները և թէ փոքրերը։ Մեծ մասամբ ոստիկանները, երթևեկ աշակերտները, բժիշկները, հաշտարար դատաւորները (բոլոր պահեստի դատաւորները պաշտօնի են հրաւիրուած), ցրուիչները և այլն, միով բանիւ այն բոլոր անձինք, որոնք յաճախ ստիպուած են սենեակից փողոց դուրս գալ և ենթարկուել օդի փոփոխութեան։

* * *

Օդեսայի լրագրները հաղորդում են, որ այժմ Օդեսայումն են երկու տաճկական սպաներ՝ Իբրահիմ բէյ և Բիզա բէյ, որոնք տաճիկ կառավարութեան յանձնարարութեամբ եկել են Ռուսաստանի զանազան նահանգներից ձիեր գնելու։ Դրանք արդէն 500 ձի գնել են և ուղարկել Տաճկաստան։

* * *

Յիշեցնում ենք ընթերցողներին, որ պ. Մեծատուրեանի դասախօսութիւնը՝ պատմական նորագոյն աշխատութիւնների մասին, տեղի կ'ունենայ վաղը, մարտի 4-ին, Թիֆլիզի Փողովարանում, երեկոյեան 8 ժամին։

* * *

«ՄՇԱԿԻ» ԲԱՆԱԴՐԱՆՔԸ

—

Միջին դարերում բանադրում էին ինկվիզիտորները. մինչև այժմ բանադրում էր հռովմի Պապը, իսկ այժմ այդ իրաւունքն իրեն է վերապահում պ. Քալանտարը։

Մենք մինչև այժմ աշխարհի հետ միասին կարծում էինք թէ «Մշակը» չէ ընդունում «զղջումն» և ապաշխարութիւն, որովհետև դա հակառակ է կրօնների անխտրութեանց սկզբունքին. բայց այժմ իր № 25-ի մէջ այդ լրագիրը ոչ միայն «զղջումն» է քարոզում, այլ և բանադրում է Քամոյենց եկեղեցու ծխականներին։ 'Ի հարկէ ուրախալի է «Մշակի» այդպիսի կրօնական ջերմեռանդութիւնը «զի ոչ կամիմ զմահ անօրէնին, այլ դառնալն նորա և զկեալն». բայց ինչ առիթով է բորբոքուել նրա այդ կապուցինական «զղջման» զգացմունքը. ահա թէ ինչ.—բանից դուրս գալիս որ պ. Մելիք-Ղարագեօզեանը «Մշակի» շնորհիւ ընտրուել է Քամոյենց եկեղեցու երեցփոխ. այն օրից այդ եկեղեցու ծխականները անտարբերութեամբ են վերաբերվում և եկեղեցի չեն յաճախում... Պ. Մելիք-Ղարագեօզեանը այդ հանգամանքից վիրաւորուելով հրաժարական է տուել իր պաշտօնից, առանց սպասելու որ իր պաշտօնավարութեան ժամանակը լըրանայ։ Այդ բոլորը տեսնելով «Մշակը» և ի խորոց սրտի խոցուելով ասում է. «Ինչպէս մեզ հաղորդում են պ. Մելիք Ղարագեօզեանի հրաժարականի պատճառը ծխականների անտարբերութիւնն է»։ Եւ յետոյ անմիջապէս աւելացնում է. «Քամոյենց եկեղեցու ծխականները դեռ մեծ յոյսեր ունէին իրանց այժմեան երեցփոխի վրայ ..» հասկանում էք. և՛ անտարբեր են և՛ մեծ յոյսեր ունէին։ Ուստի «Մշակը» Քամոյենց եկեղեցու ծխականներին դատապարտում է «զղջման» և պահանջում է, թէ «ծխականներին ուրիշ ոչինչ չէ մնում, բայց եթէ հաւաքուել, ԶՂՋԱԼ իրանց անտարբերութեան համար և խնդրել պ. Մելիք Ղարագեօզեանցին երեցփոխ ընտրել...»։

Զղջացէք և ապաշխարէք, հայոց ազգ, որպէս զի պ. Մելիք-Ղարագեօզեանցին երեցփոխ ընտրէս...

Բայց երևի ինքը պ. Մելիք-Ղարագեօզեանը կը կարդայ «Մշակի» այդ նոյն համարում տպագրուած պ. Արշակ Տէր-Գրիգորեանի նամակը, որով նա զարմանք է յայտնում, թէ ովքեր և ինչպէս և ինչ հրաշխաւորութեամբ իրեն ընտրել են Բարեգործական Ընկերութեան խորհրդի փոխանդամ, և ամենազնիւ կերպով հրաժարվում է այդ «պաշտօնից». բայց կարդալը բաւական չէ. արդեօք կը հասկանա՞յ այդ նամակի միտքը։

Ո՞վ, Փիոգինէս, Փիոգինէս, ո՞րտեղ ես, տուր ինձ լապտերդ, գոնէ մի մարդ է հարկաւոր։

Մոր-Աճոր։

* * *

ՍԽՈՒՄԻՑ, 28 փետրվ.

(Թղթակցութիւն "Արձագանքի")

—

Ամսոյս 26 ին տեղիս Գրադարան Ընթերցարանի դահլիճում կայացաւ Կովկասի Հ. Բ Ը. Ուսոյցխայի բաժնի ընդհանուր ժողով։ Փողովի պարապմանց առարկաներն էին 1) Քննել Ընկերութեան տեղական բաժնի անցեալ 1894 թ. ել ու մտից հաշիւը, 2) Ընտրել Վարչութեան մի անդամ հրաժարուած Նորընտիր անդամ պ. Առ. Մելքոնեանի փոխարէն։

Նիստը բացուելուց յետոյ, ընդհ. ժող. պ. Նախագահը կարդաց վերաստուգող յանձնաժողովի զեկուցագիրը, որից երևաց, որ անդամակցական վճարներից 20 ռ. մուտք չէ գրուած մատեանում։ Վարչութեան անդամների այդ մասին տուած բացատրութիւնից երևաց, որ յիշեալ գումարը նախկին գանձապահի օրով չէ ստացուած եղել չորս անդամից։ Վարչութիւնը պատւիրկն ստանալու համար՝ միջոցներ է ձեռք առել, և փողի մի մասը արդէն ստացուել է։

Զեկուցագրից երևում է, որ 1894 թ. գրադարան-ընթերցարանի համար բերուելիք գրքերի և լրագրների մասին վարչութիւնը արձանագրութեամբ ոչ մի կարգադրութիւն չէ արել, այլ այդ Թողնուած է եղել մի անհատի ընտրութեանը։ Փողովն այդ պարագին և մի անհատի իրաւունքից բարձր էր համարում, ուստի և որոշեց առաջարկել վարչութեանը, որ նա այսուհետև օրագրութեամբ որոշի, թէ ինչ գրքեր և լրագրներ պէտք է

մեծ պարտաւորութիւն կըզգամ, գոնէ ի յիշատակ այն մեծ գործին ընդունէք դայս փոքրիկ արձագանք։

Այո, կը յիշեմ բազմաթիւ ծերունիներ, որք իւրեանց երկրին մէջ մեծամեծ տներ ունէին, որոց եղբարք, որդիք և մի մեծ հասարակութիւն պատկառանօք իւրեանց հրամաններն իբրև պատգամ կը կատարէին, որք բաղդի դժնդակ հարուածներու ներքոյ գրկուած ամեն վայելչութենէ, ընկած դռնէ ի դուռ՝ օրական պարէն կորոնէ, իւր և իւր որբ մնացած թոռներով քաղցը յագեցնէ, սակայն ձևն չգիտէր տնեցւոց գութն շարժելու համար բառեր յերիւրելու, այլ ունայնաձեռն յետ կը դառնայ, տեղի տալով շռայլաբանին, որ գիտէ ժողովուրդն կթել։ Նա այլ ևս չըհամարձակիր մտնել մի այլ տուն, յետ կը դառնայ նոյնպէս դողդոջուն քայլով, և հիւծեալ անդամներով, կը ստիպուի Վեհարանի դուռն դադար առնել. գիտէ նա որ այստեղ կայ հեռատես Հայրիկ. Նա կը ճանաչէ իրօք օգնութեան կարօտ անձը և ըստ այնմ խնամ կը տանէ։

Այո, Հայրիկ, կը յիշեմ իւրեանց երկրին մէջ հիւրասէր տանտիկիններ. որ երբ բարկ թունդրայ շուրթն նստած և կրակի ջերմութեան առջև հաց թխելու համար չարաչար տանջուած միջոցին ևս, մտահան չէր աներ աղքատներն, թունդրէն հանած առաջին հացերն դուրս պիտի յղէր, աղքատ մի պիտի որոնէր, նմա տար. զի «առաջին հացի հոտը դուրսը տարածուած է», մեղք է ուտել. Նա աղքատի բաժին է. Նորա յատուկ կերակուրը տաք թունդրայ մէջ մշտական պիտի պահուէր պատահական հիւրերու համար, նորանէ երբ ներողութիւն խընդրուէր և երբ շնորհակալութիւն յայտնուէր ստացուած բարեաց համար, նա նեղանալով կասէր.—միթէ կուզէիր մեր տուն հիւր չգայ, ահա այդ ժամանակ Աստուած անիծած է մեր տուն, Աստուած տուած է հացը, այդ հացին չափ ևս հիւր կը յղէ. Ինք գիտէ Իւր գործ։

Ահա այս տանտիկինը, տանը ներքին գործերու ղեկավարն, բիւր բարիքներով լի մառանի տէրն, ա՜հ, ո՜վ գիտէ ինչ սոսկալի պատահարներէ իւր որդւոց և կամ հարսներու պատիւն ու կեանք կորզած՝ արեան ծովը ճեղքելով անցած, պատառոտած քրջերով, բոբիկ ոտով, քաղցած փորով, հառաչանք քաշելով, ընկած դռնէ ի դուռ, ուր ըստ պատշաճին գոհացում չըգտնելով, քայլերն ուղղած է դէպի Վեհարան, ուստի գոհ սրտով դարձած է, բիւր օրհնութիւններ թափելով։

Ով չգիտէր այն ամօթխած հարսներն, որք թէև մերկ և քաղցած են, որք թէև ուրախ և ժպտալից կերևին նորա համար, որ Ռուսական հողը մտած են և իւրեանց պատիւը պահած, սակայն քաղցը ստիպած է անսովոր մուրացկանութեան դիմել, և տեղ տեղ անարգանքներ լսել. իսկ շատեր այդ ընթացք քամահրելի համարելով քայլերնին ուղղած են իւրեանց Հայրիկին, այն մտադրութեամբ—մեր Հայրիկն է, մեզ պիտի պահէ, թոյլ պիտի չտայ, կասէ, գրկիս երեխայն անծին և անմայր մնայ, չպիտի թոյլ տայ հայ բենիքէ և քաղցրիկ վայելչութենէ զըրկուած մի հեգ կին, իւր միակ յոյսն եղող զաւակէն զրկուի. Նա քանի որ Հայրիկ է, պարտաւոր է մեզ Աստուծոյ և ատեան դատաստանի առաջ, կասէ և ոչ թէ կը խնդրէ, այլ կը պահանջէ.

Որչափ հարսներ և կանայք տեսայ, Վեհափառ Հայրիկ, որք հիւծեալ, գունատ՝ խումբ խումբ կը դիմէին առ Ձեզ, որոց իւրաքանչիւրը մի ձեռով գրկած էր նորածին մանուկ մի, միւսով միւս հիւանդոտ փոքրիկ երեխայի ձեռքէն բռնած քաշ տալով Վեհարան կը դիմէր, այն նուիրական վայրն, ուր դարերով մխիթարուած է հայ ազգը այլ և այլ հանգամանաց մէջ։ Սա ստինքը տուած էր նորածին երեխայի բերանը, որ խափէ, երեխայի լացը առժամանակ մի դադարեցնէ. երեխայն այն չոր կաշի դարձած ստեանց մէջ նիւթ չգտնելով նուաղկոտ ձայն մի կարձակէր, մայրն ևս ի խորոց մ՜ս կը քաշէր, սակայն դեռ յուսոյ սեղանը զինք կուրախացնէր, որով ժիր կը քայլէր, կը թռչէր։

Այդ «մ՜ս» ի արժէքը խղճահար մի անձնաւորութիւն պէտք էր որ կշռէր։ Նա գտաւ իւր որոնածը, մխիթարուած դարձաւ սակաւ ինչ հասակաւոր որդւոցը մօտ, զորս մի գոմի ցուրտ և մութ անկիւն թոյլ տուած էր։

Կը յիշէք անշուշտ թէ անագորոյն հիւանդութիւնը ո՛րպէս մխած է իւր անգութ ճիրաններն ի սիրտս գաղթականաց, ո՛րպէս տապալած է գետին բաղդի դժնդակ հարուածը, ո՛րպէս արմատախիլ արած է ընտանիքին մեծը, մատղաշ մանկանց հայրն կամ մայրը. երեխայոց հասակաւորը որպէս դալկահար անկողնոյ կը ծառայէ. փոքրիկներն անօգնական, որպէս տնփետուր թռչնիի բերաններն բաց խուփ անելով՝ գթութիւն մի՝ կտրիկ մի կը խնդրեն. իսկ Դուք, Հայրիկդ հայոց, Ձեր գթութեամբ լի ձեռներն հեռուէն ևս տարածեցիք, օգնեցիք այն անփետուր ձագուկներուն, գիտնալով թէ ո՛վ գիտէ ապագային մէջ ինչ հրաշալի անդամներ յառաջ պիտի գան այդ աննշան կարծուած անձերէ։

Ո՛վ Հայրիկդ Հայոց, Դուք քաջ կը ճանաչէք այս թշուառ ժողովուրդն, որ կը քաշէ հայրենեաց կարօտը և տենչը, կը յիշէ արենակից ազգականներ, որոց սրտի կէսն, քաղցրիկ զաւակներու մէկ մասն թողած անջատուած՝ որոց կարօտուն հառաչանքներ կարձակէ, ձեռներն կը պարզէ, չհասնիր. իւր սրտով ու մըտքով կը թռչի որոց մօտ. կը տեսնէ որոց ևս թշուառ դրութիւնը, կը փարի որոց, նուաղկոտ ձայն մի կարձակէ և ապա կը զգաստանայ որ դարձեալ նոյն վիճակն ունի և նոյն թշուառն է. և արդեօք ո՞վ կը չափէ նորա յօշոտուած սիրտըն, պայթուած աղիքներ։

Այս ամենը և աւելին ևս Դուք գիտէիք Ձեր բարի սրտին ծանօթ էր ողբալի հայութեան այս վիճակ. ուր վասն ձայն բարձրացուցիք, հրաւէր կարդացիք մեծատանց, ողորմած անձանց, որք ձեռքն կառկառեն իւրեանց արենակից ազգակցաց. որք ձմրան սաստկութեան առաջ անտուն, անտեղ կը սառչէին, անագորոյն կատաղի սովի առաջ նուաղած՝ ընկած, կը տոչորուէին։

Ահա, Վեհափառ Հայրիկ, այսօր հայ գաղթականութիւնը կեանք ունի և՛ այդ կեանքը կը պարտի իւր գթառատ Հայրիկին։

Արդ, հայ գաղթականութիւնը դարուց ի դարս, որդւոց որդի պիտի յիշէ այս մեծ գործ, որ իւրեան Հայրիկը իւրեան կեանք շնորհեց։

Իմ երկս ևս ցամաքեալ աղբերակներով թող պարծի, իւր ճակատին վերայ դրոշմուած սխրալի յիշատակով»։

Արդէն այդ ուղերձից երևում է թէ որքան բուռն սէր է տածում հեղինակը դէպի այն ժողովուրդը, որ հայրենի հողից զրկուած, աստանդական թափառում է՝ իրեն յանձնելով մարդկային ողորմածութեան և գթութեան։ Ինքը հեղինակը ևս, ինչպէս մենք իմացանք, մինն է այն վտարանդիներից, որի լիքը տունը, ոսկեայ արտը և հարուստ կալուածները մնացել են գայլերի բերանում։ Ահա այդ վտարանդի պանդուխտը մեզ առած իւր հետ պտտեցնում է իր սիրուն հայրենիքը անցկացնելով մեզ Շահ-Եօլի լեռնային բարձրաւանդակով, որտեղից նա մի առ մի ձեզ ցոյց է տալիս դրախտանման Բաղրեւանդի հարիւրաւոր հովիտները, լեռներ ու սարահարթները, «դաշտ և լեռ մեծ և փոքր աղբիւրներով զարդարուած, ամեն տեղ տարածուած սփռուած յստակ սառն քաղցրահամ ջրեր, գլգլացող աղբիւրի ակեր, կարկաչող առուակներ, սոզացող առուներ, չըշըրացող նեղ ձորակներ, պսպղուն փոքրիկ և մեծ լճակներ» և այլն և այլն։ Եւ այդպիսի մի ջրաշատ և ջրաբաշխ երկիր «աւելորդ է ասել թէ որպիսի տեսակ

բերուեն գրադարան-ընթերցարանի համար։

Պ. Տ.ը յայտնեց, թէ ցանկալի կը լինէր, որ գրադարան-ընթերցարանի համար բերել տալիք թէ գրքերի և թէ լրագրների որոշումը լինէր ընդհանուր ժողովով, վարչութիւնը նախ կազմէր ցուցակ և ապա այն ներկայացնէր ընդհանուր ժողովի քննութեանը։ Պարոնի առաջարկութիւնը ժողովի քննութեան նիւթ լինել չէր կարող, ըստ որում գրադարան-ընթերցարանի կանոնադրութեամբ այդ իրաւունքը վերապահուած է վարչութեանը։ Գրադարան-ընթերցարանի աւօրեայ-մուտքի մատեանի մէջ մուտքը ամսէ ամիս փակւեցրած չէ. ժողովը որոշեց առաջարկել վարչութեանը, որ նա ամսէ ամիս փակւեցնի։

Վերաստուգող յանձնաժողովը գտել է, որ պահարաններ չլինելու պատճառով՝ բաւական թւով գրքերն ու լրագիրներ խառնիխուռն թափուած են զանազան անկիւններում. գրքերն էլ համարագրուած չեն։ Ժողովը որոշեց խնդրել վարչութեանը, որ նա գրքերի և լրագրների համար պահարաններ գնի ու համարագրել տայ գրքերը, նաև կազմի մի կանոնաւոր և լիակատար գրացուցակ, որի պահանջը ՚ի վաղուց հետէ զգացուած է։ Ժամանակի բան է. ամեն տարի ժողովներում գրացուցակը կարգի բերելու մասին խօսք է լինում, որոշում է կայանում մի նոր կարգին գրացուցակ կազմելու, բայց ցորս իրականութիւն չէ գտել այդ որոշումը, դրադարան բացուելու օրից կազմած ցուցակը մնում է իր տեղում, անշուշտ դեռ շատ տարիներ էլ կը մնայ, եթէ մենք որոշումներ կանենք՝ լոկ որոշումներ արած լինելու համար։

Հեկուցագրի ընթերցումից յետոյ ժողովը հաստատեց վարչութեան կազմած 1894 թ. համար ելից և մուտից հաշիւը։

Ի վերջոյ ժողովն զբաղուեց հրաժարուած նորընտիր անդամ պ. Մ-ի փոխարէն մի նոր անդամ ընտրելու հարցով։ Թերթիկներով թեկնածուներ առաջարկուեցան, որոնցից մի քանիսը քուէարկուելուց հրաժարուեցան։ Դրուեց երկու տուփ։ Գաղտնի քուէարկութեամբ պ. Յ. Յակոբեանն ստացաւ 13 սպ. 6 սև, պ. Ա. Բէօրակճեանը (բացակայ) 13 սպ. 7 սև։ Վարչութեան անդամ ընտրուած է պ. Յ. Յակոբեանը (հաշտ. դատաւ. քարտուղար)։

— Ամսոյս 27-ին կայացած ս. Փրկիչ եկեղեցւոյ երեցփոխանական պատգամաւորաց ժողովում երեցփոխան ընտրուեց պ. Յ. Զաթլոբաշեանը 16 ձայնով ընդդէմ 9 ի։ Պարոնը երկսեռ դպրոցների հոգաբարձու է։ Այստեղ մի հարց է առաջ գալիս պարզելու. Երեցփոխանը դպրոցական կանոնադրութեամբ միաժամանակ և հոգաբարձու է համարւում ի պաշտօնէ. իրաւունք կա՞ր արդեօք պարոնին քուէարկելու այդ պաշտօնի համար։

Վր.

* * *

ՍԻՄՖՕՆԻԱԿԱՆ ԵՐԵԿՈՅԹ

Երեքշաբթի, փետրվարի 28-ին, արքունական թատրոնում տեղի ունեցաւ առաջին սիմֆօնիական նուագահանդէսը, որ շատ յաջող անցաւ։ Այս յաջողութիւնը պէտք է վերագրել գլխաւորապէս երաժշտական դպրոցի տեսուչ պ. Կլէնովսկուն, որ մեծ հմտութեամբ կառավարում էր նուագախումբը։

Պ. Կլէնովսկին հանդիսանում է մի լուրջ երաժիշտ. ծրագիրը կազմած էր բազմակողմանի։

Բէթհովէնի՝ «C-moll սիմֆօնիան», Բէրլիօզի «Հունգարական քայլերգը», «Damnation de Faust» աւանդութիւնից ծանօթ են Թիֆլիզի հասարակութեան պ. Իպպոլիտով-Իւանովի կազմած սիմֆօնիական երեկոյթներից, նորութիւն էր Թիֆլիզի համար Գրիգի «սիւիտան», որի բնաբանը վերցրած է Իբսէնի «Պեր Գինտ» (Peer Gynt) գրուածքից։ Երաժշտութիւնը գեղեցիկ է, չափից դուրս մեղեդիական, մանաւանդ Սոլվէյգի երգը։

Շատ սիրուն էր Շուբերտ-Լիստի Fantaisie՚ն—որի գլխաւոր մեղեդին Շուբերտի «Der Wanderer» երգը—նուագում էր պ. Պրէսսմանը խմբի հետ։

Ջութակահար պ. Վասիլեւը կատարեց նուագախմբի հետ Էրնստի «Concert»-ը մեծ յաջողութեամբ և հասարակութիւնը վարձատրեց նրան բուռն ծափահարութեամբ և bis երով։ Տ. Դը-վօս-Սօբօլեվայի փոխարէն երգեց պ. Ակիմովը՝ մի չափից դուրս անտաշ, անհամ երգիչ, որ մեծ ծառայութիւն կ'անէր, եթէ ամենևին բեմ դուրս չգար-չէ՞ որ այդ տեսակ երգիչները վիրաւորում են մարդուս լսելիքը։

Պ. Կլէնովսկին մտադիր է մի շարք այդպիսի նուագահանդէսներ կազմել և քանի որ դոքա տեղի են ունենալու մեծ պասին, ցանկալի և նպատակայարմար կը լինէր ծանօթացնել մեր հասարակութեանը եւրոպական հոգևոր երաժշտութեան հետ։

Մի փոքր նկատողութիւն. տեղերի գները մեր կարծիքով բարձր են և ամեն անգամ չեն գրաւել այնչափ բազմութիւն, որչափ առաջին անգամ։

Արդեօք աւելի լաւ չէ՞ր լինել նշանակ՚ել այդ երեկոյթները շաբաթ օրերը, որպէս զի դպրոցական աշակերտները ևս առիթ ունենան վայելելու նուրբ արուեստը, որ այնքան կրթիչ նշանակութիւն ունի։

Z.

ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

*** Եօթը տարուան պատուաւոր գոյութիւնից յետոյ դադարում է ռուսաց գեղարուեստական մամուլի միակ և ընտիր հրատարակութիւնը՝ «Արտիստ» ամսագիրը։ Այդ գեղարուեստական օրգանը իր նմանը չէ ունեցել ռուսաց գրականութեան մէջ, նա մինչև անգամ իր բովանդակութեան, շքեղութեան և գրական մեծ արժանիքի կողմից մօտենում էր եւրոպական համանման հրատարակութիւններին։ «Արտիստը» գեղարուեստական-գրական օրգան էր բառիս բուն նշանակութեամբ։ Նրա համարները միշտ լիքն էին մշակուած գեղարուեստական յօդուածներով, ընտիր բանաստեղծութիւններով, ինքնուրոյն և թարգմանական դրամատիքական գրուածներով։ «Արտիստի» նկարները և գրավիւրները եւրոպական դրոշմ էին կրում։ Այդ ամսագրին մասնակցում էին ռուսաց գրական ամենալաւ ոյժերը և միացեալ աշխատանքով հասցրել էին ամսագիրը իր ցանկալի բարձրութեան, բայց դուրս եկաւ, որ 120 միլիոն ժողովուրդ ունեցող երկիրը չէ կարող մի այդպիսի ամսագիր պահպանել. և նա դադարում է։ Մեզ՝ Կովկասցիներիս համար «Արտիստ» ամսագիրն առանձին հետաքրքրական էր ոչ միայն այն պատճառով, որ նա առհասարակ մի սքանչելի գեղարուեստական գրական օրգան էր, այլ և նրա համար, որ նա շարունակ հետևում էր Կովկասեան կեանքին և գրականութեանը։ «Արտիստի» համարներում միշտ եղել են հետաքրքրական և բարեխիղճ թղթակցութիւններ Կովկասեան գրականութեան և գեղարուեստի վերաբերեալ։ Երբ մեռաւ Հայոց բեմի տաղանդաւոր դերասան Ադամեանը, «Արտիստ»-ը տպագրեց հանգուցեալի պատկերը և նրա մանրամասն կենսագրութիւնը. Նոյն օրգանի մէջ մի քանի գեղեցիկ և մշակուած յօդուածներ են լոյս տեսել երիտասարդ գրող պ. Իւրիյ Վեսելովսկու ստորագրութեամբ Հայոց գրականութեան վերաբերմամբ։ «Արտիստի» վերջին համարում տպագրուած է նոյնպէս մի մանրամասն և գեղեցիկ ուսումնասիրութիւն վրաց ազգային երգերի և նրան կցած է եւրոպական ձայնանիշներով ձայնագրած վրաց երգեր. յօդուածը և ձայնագրութիւնը պատկանում է Թիֆլիզին լաւ ծանօթ պ. Իպպոլիտ-Իվանովի գրչին։ Նոյն համարում տպագրուած է պ. Իւրիյ Վեսելովսկու յօդուածը, որ նա նուիրել է պ. Ա. Թարխանեանի խմբագրած «Թատրոնի» I և II գրքերին։ Թէ որքան անկեղծ ազնուութեամբ է վերաբերվում «Արտիստ» ամսագիրը հայ գրականութեան և թէ որքան խելացի են նրա ցուցմունքները մեր նոր սկսուող օրգանների համար, այդ կերևայ այն քաղուածներից, որ մենք կանենք պ. Իւրիյ Վեսելովսկու յօդուածից և որ կարող է իբրև օրինակ ծառայել մեր այն օրգաններին, որոնք գեղարուեստից և գրականութիւնից ոչ մի հասկացողութիւն չունենալով միայն հայհոյել գիտեն ամեն մի գրական նոր երևոյթ։ Խօսելով Հայոց թատերական գրականութեան մասին «Թատրոն» հանդէսի առիթով, պ. Ի. Վեսելովսկին ասում է.

«Հայ թատրոնին և դրամատիքական արուեստին նուիրուած «յատուկ օրգան հիմնելը սովորական երևոյթ չէ հայոց գրական աշխարհում։ Մեր դարի ընթացքում երևցած բազմաթիւ հայկական պարբերական հրատարակութեանց շարքում մենք տեսնում ենք որ միայն 2-3 փորձեր են եղել թատրոնական օրգան հիմնելու և այն էլ բացառապէս Կ. Պոլսում. Այսպէս 1857—59 թւին ձեռնարկութիւն եղաւ «Մուսայք Արարատեան» հրատարակելու, որի գլխաւոր նպատակն էր եւրոպական նշանաւոր դրամատիքական գրուածներ տպագրել և այդպիսով հարստացնել հայոց թատրոնի րէպէրտուարը... «Բայց Թիֆլիզում—շարունակում է պ. Վեսելովսկին—այդ հայկական երկրորդ կուլտուրական կենդրոնում երբէք գոյութիւն չէ ունեցել մի այնպիսի հրատարակութիւն, որ գոնէ մօտենար թատրոնական բազմակողմանի հանդէսի իդէալին»։

Պ. Իւրիյ Վեսելովսկին առաջին տեղը տալով պ. Ա. Հախումեանի՝ «Թատրոն, բեմ և լեզու» (I գիրք) և պ. Յ. Ղազարբէկեանի՝ «Թատրոնի էսթէքական նշանակութիւնը» յօդուածներին անցնում է հայ բեմի վետերան պ. Պերճ Պռօշեանին և մեծ համակրանքով խօսելով նրա մասին, անցնում է պ. Գ. Չմշկեանին, «որ աւելի մեծ տաղանդով ստեղծեց Թիֆլիզի ամբոխի որդի Ջհնուս Պէպօ-ի տիպը պ. Գաբր. Սունդուկեանցի պիէսում»։

Հեղինակը ամենայն անաչառութեամբ վերաբերուելով հայկական նոր գեղարուեստական օրգանին և բերելով նրա արժանաւորութիւնները, նոյն անաչառութեամբ նա մատնացոյց է անում, թէ հանդէսի մէջ պակասում են տեղեկութիւններ Թիֆլիզից դուրս պատահած ներկայացումների և երեկոյթների մասին և չէ մոռանում յիշել որ նոյն իսկ Նիւ-Եորքում երկու տարի առաջ հայերէն ներկայացումն է կայացել, ուր բեմի վրայ խաղացել են մի հայկական պատմական պիէս։

Ինչպէս տեսնում էք մեր պատմութիւնը ուրիշները մեզանից աւելի լաւ գիտեն, և ուրիշները մեզ աւելի յարգել գիտեն քան մենք ինքներս։

Ահ՛ մեր գրականութեան այդպիսի ծանօթներից և նրան յարգողներից է «Արտիստ» ամսագիրը, որի դադարումը մեզ ցաւ է պատճառում, մանաւանդ որ նա ռուս մամուլի օրգանների մէջ ամենապատուաւոր տեղն էր բռնում։

ՏԱՃԿԱ-ՀԱՅԱՍՏԱՆ

ԲԱԲԵՐԴ, 19 փետր.

(Թղթակցութիւն «Արձագանքի»)

Ինչպէս ամիս մը առաջ շնորհիւ նորընտիր Իզմիրլեան սրբազան Պատրիարք Հօր վեհ. հայրապետին անդրանիկ կոնդակին (որ 1893 դեկտ. 15 թուականը կը կրէր) հանդիսաւորապէս ընթերցումը տեղի ունեցաւ մեր մայր եկեղեցիին մէջ, այսօր ալ իրեն անդրանիկ կոնդակին ընթերցումը լսելու բաղդն ունեցանք։ Երկու կոնդակներն ալ՝ որոց կարդացուած ժամանակներն ժողովրդեան հոծ բազմութեամբ լեցուած էր եկեղեցին, քաջալեր հանդիսացան ժողովրդին այս մոլորեալ և յուսահատ կացութեանը մէջ։

Յիշատակութեան արժանի է նաև Ս. Պատրիարք Հօր շրջաբերական մէկ նամակը, որով կը զեկուցանէր թեմական առաջնորդարաններուն, թէ «յետ այսու ինչ դէպք որ պատահի, օրը օրին պէտք է որ անյապաղ տեղեկագրեն ՚ի Պատրիարքարան, և եթէ տեղական իշխանութիւնք առ այդ թերութեան մէջ գտնուելով՝ հարկ լինի Բ. Դրան դիմել, պէտք չէ որ ուղղակի իրենք դիմեն, այլ Պատրիարքարանի յայտագրելու են խնդիրը, անկա կրնայ պարտ ու պատշաճ եղանակաւ ներկայացնել զայն Բ. Դրան անշուշտ գործադրել տալով հարկ եղածը։ Ասկէ նորընտիր Պատրիարքին քաջասրտութիւնը և գործունէութիւնը կ'ապացուցանէ, մինչ դեռ իր նախորդին օրով պատահած այնչափ դէպքեր անպատիժ մնացին։

Կառավարական կարգ մը պաշտօնեաներ, ինչպէս նախնական դատարանի անդամն և միանգամայն հարցաքննիչը, այդ դատարանին առաջին քարտուղարը, ոստիկանութեան քոմիսերը, անցագրատան և ընդհ. պարտուց վարչութեան պաշտօնեաները, թաղապետական բժիշկը, Բուլտիէլի վարժարանին տեսուչը, Ալէյման բաշալին երկու տղաքները, կարգ մը զինուորական սպաներ և քանի մը իւզէմաներ կը խրատեն ու կը յանձնարարեն տաճիկ հասարակութեան, որ հայերու հետ առևտուր չընելով՝ միմիայն իրենց ազգակիցներուն քով չի գտնուածները գնեն անոնցմէ, դայնս իսկ քիչ շահով առնելու աշխատին։

Եւ կը թելադրեն չվճարել նաև անոնց ունեցած պարտքերնին, ինչպէս իրենք չեն վճարեր. Հայ մը երբ դատով իյնայ ճանկերնին, անոր շապիկն անգամ հանել կաշխատին։

Մէկ կողմէն կառավարութիւնը իր ծանրածանր տուրքերով և միւս կողմէն անգութ թուրք վախշառուք չափազանց—մինչև իսկ 60 տոկոսներով անխնայ ծծելով գաւառիս հայերուն արիւնը՝ վերջապէս չոր կմախքի դարձուցած են զանոնք. ադոնց երեսէն շատեր գաղթականութեան մէջ սփոփանք գտնելու յուսով քանի մը տարիէ ի վեր ասդ անդ գաղթեցին։

Տեղական կառավարութիւնը՝ ամենայն խստութեամբ թէ քաղաքիս և թէ գիւղօրէից մէջ յառաջ կը տանի հարկահաւաքութիւնը. իւր նոր օրէնքները։ Վերջերս շրջակայ հայերէն ալ առնելու բան մը չգտնելով, անոնց եզները, կովերն, տաւարները և մինչև իսկ անկողիններն ու վարուցանի գործիքները քըշել բերել տալով ծախեց և առաւել յետնեալ տուրքերը։

Վաճառական և արհեստաւոր մասին ներկայ նիւթական կացութիւնը ևս շատ տխուր և յուսահատական դարձած է, որոնք փոխանակ յառաջ գնալու, օր յաւուր ետ կերթան, որովհետև ժողովրդին աղքատութեան պատճառաւ առևտուրները դադարած են բոլորովին. միւս կողմէն դատարանին թուլութիւը—որ թուլութիւն ըսել է զզուեցուցած է զիրենք պահանջական խնդիրներու համար հոն ներկայանալու, քանի որ գործադրութիւն չկայ երբէք, որով իրենց իրաւունքներն ու պահանջներն ինքնին կը փճանան։

Ինչպէս ուրիշ տեղեր՝ հոս ալ ամէն թաղի ու ամէն գիւղի մէջ գիշերապահներ բռնուեցան (որոնք միշտ երկուք ըլլալով մին հայ և միւսը թիւրք պէտք է լինի) ադոնց ամսականները ևս ժողովուրդը կըվճարէ։

Գ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅԿԵՐՈՅԹ Ի ՊԱՏԻՒ ԳՕՆԿՈՒՐԻ

Փարիզի նշանաւոր գրագէտները, նկարիչներն և քաղաքական գործիչները, կամենալով յարգել վիպասան Գօնկուրին, նորերս մի հացկերոյթ են տուել նրա ծննդեան 72 ամեայ տարեդարձի օրը։ Ճաշի ժամանակ նախարար Պուանկարէն Պատուաւոր Լէգէօնի շքանշանի վարդաձև ժապաւէն է կցնում նրա լամբակին (boutonnière) և շատերը ճառ են ասում։ Ի միջի այլոց Կլէմանսօն, որ խօսում էր ի դիմաց ընթերցող հասարակութեան, փորձում է ցոյց տալ ականոր մատենագրի հասարակային նշանակութիւնը։ Գօնկուրը, նրա ասելով, իւր գրական ասպարէզի սկզբում ջատագով էր անցեալ դարու քաղաքակրթութեան աչքի ընկնող փայլուն կողմերի և շատ խրոտ էր վերաբերվում դէպի հասարակ ժողովուրդը։ Սակայն այդ հասարակ ժողովրդի կամ ամբոխի կեանքն աւելի լաւ ուսումնասիրելուց յետոյ՝ վիպասանն ըսկսաւ ջերմ կարեկցել նրա անելվիճակին, ոգևորուել նրա համարձակութեամբ և սիրել նրա հերոսական քաջութիւնը։ Այս զգացմունքները նա արտայայտեց իւր «Germinie Lacerteux», «La fille Elise» և ուրիշ վէպերի մէջ։ Այս է, Կլէմանսօի կարծիքով, Գօնկուրի հասարակային նշանակութիւնը։ Խօսելով այնուհետև Գօնկուրի մասին, որպէս արուեստագէտի և մատենագրի, ատենաբանը խոնարհում է նրա զարմանալի և բարեխիղճ ջանասիրութեան, նրա անկաշառելի անկեղծութեան, նրա հաստատամտութեան առջև, որով նա միշտ հաւատարիմ է մնացել իրեն և իւր համոզմունքներին, — յատկութիւններ, որոնք շատ հազուագիւտ են մեր օրերում։ Գօնկուրի գրականական արժանիքն և Ֆրանսիա

բանջարեղենօք և երփներանգ ծաղկօք և մարգագետիններով պճնուած է», տեսնողներին դիւթում է։

Բայց միայն այդ սքանչելի հարուստ բնութեան նկարագիրը չէ որ իր գրքի մէջ խառն ի խուռն տալիս է պ. Ս. Հայկունին. այլ նրա անուանած ամեն մի քարը, ամեն մի ժայռը, ամեն մի բերդը, լճակը, աղբիւրը, ճանապարհը ունի իր պատմութիւնը՝ որը դիւցազնական, որը եղերգական, որը զաւեշտական։ Գետերի, լճերի, հովիտների միմեանց ետևից շարուած անուններից հենց քիչ է մնում յոգնէք, բայց յանկարծ նա կանգնում է դրանցից մէկի վրայ և պատմում է ձեզ նրա վերաբերեալ կամ աւանդութիւնը կամ վէպը կամ ճշգրիտ պատմութիւնը և դուք մտքով փոխադրվում էք Բագրևանդ հայի գիւղական տունը, կամ քրդի վրանը, ձեր ականջին հնչում է գիւղական սրինգը և դուք լսում էք թէ ինչպէս ծերունիները պատմում են իրենց երկրի պատմութիւնը։ Եւ դժուարն այն է որ մի զրոյց կամ պատմութիւն սկսուեց, երկրորդը, երրորդը և չորրորդը միմեանց արգէն հետևում են։

Այժմ տեսնենք ինչպէս է ապրում Հայաստանի կովը Կալոյի ձորում.

«Հասակաչափ մարգագետիններու մէջ կանչայտանայ մարդ խոտերու մէջ, երփներանգ ծաղկունք քաղցր բուրմամբ ըզմարդ կարբեցնեն, կը յափշտակեն և կուգես փարել, գլորել, նստել այս չքնաղ մարգերու մէջ՝ կալ և մնալ, հաւատալով որ մշտնջենական են այս տեսարանք և վայելչութիւնք, կարծելով որ հարիւրաւոր սևագոյն վրաններ մշտատև պիտի մնան ու զարդարեն այս հովիտն, միշտ պիտի տեսնես եզներ, կովեր, հորթեր, ոչխարներ, որք անհովիւ տարածուած են, երբեմն ևս անյայտացած խոտերի մէջ. և խումբ խումբ առուներու եզերքին, մի այլ խումբ գետակի ափերը նստած հանդարտօրէն կորճան...մի այլ խումբ կովեր բոլորուած այս կամ այն վրանի շուրջը, տանտիկինը կովկիթը ի ձեռին բանաստեղծութիւններ յօրինելով քաղցրագոյնս կերգէ առ ՚ի հաճոյս կովին, կը սեղմէ ստինքն, որ և շչալով կլեցուի կթոցն կաթնով և փրփուրով»։

Բայց կարծում էք դրանով վերջանում է այդ նահապետական սքանչելի բնութեան նկարագրութիւնը, ոչ. այլ աչքդ դարձրու միւս կողմ, այստեղ ոչխարներ, գառներ, մի այլ ժայռերի վրայ այծեր փռուած են, հովուի քաղցրալուր սրինգը նրանց առաջնորդում է, նրա արձագանքից ամեն տեղ կենդանութիւն՝ է ստանում, ամեն տեղ ծիծաղ է տիրում, «ծաղկունք երեսին կը ժպտին»։ Բայց այդ խօսքերից յետոյ հեղինակը հարցնում է՝ «բայց կարծեցիր թէ մի՞շտ է կեանքը». ոչ, այլ նա յիշեցնում է քեզ թէ ինչպէս է ապրում հայ մարդը այդ դրախտային երկրում։ Ահա անցաւ ամառ, աշնան յաջորդեց ձմեռը, սար ու ձոր ծածկուեց սպիտակ սաւանով, կովեր և ոչխարներ աներևութացան և գայլերը դուրս եկան որջերից, բայց մարդագայլեր, որոնք անցորդի կեանքի և արեանն են ծարաւի. այդ ժամանակ «մերձակայ այրերը և ծերպերը մարդկային արեան հոտ կը բուրեն. ահա զուացին հրացանները և անցորդներէն մինը թաւալգլոր ընկաւ, միւսը նոյնպէս», և այլն։ Եւ դրա հետևանքն է որ հազարներով վտարանդվում են երկրի խաղաղ բնակիչները և թափառականի ցուպն իրենց բաժին ընտրում։

Ահա հեղինակը մեզ բերել կանգնեցրել է Ամադ գիւղի գլխին և ցոյց է տալիս Չախոյի տունը, որ «եօթ գութանի տէր մեծ տուն էր»։ Չախոյի պատմութիւնը մի հիանալի վէպ է. նրա օջախը Աբրահամու օջախից պայծառ է եղել. Հինգ զաւակ է ունեցել, չորսն ամուսնացած և բազմաթիւ զաւակների տէր, իսկ փոքրը ամուրի։ Չախօն լսում է որ Կօլասար գիւղի տանուտէրը գեղեցիկ աղջիկ ունի իր որդուն յարմար և գնում է նրա աղջիկն ուզելու. բայց գնում է աղքատի, մուրացկանի շորերով, մի ամբողջ շաբաթ նստում է Կօլասարում, «որ լաւ իմանայ աղջըկան նիստ ու կացն»։ Միայն դրանից յետոյ նա իր տունը հարս է բերում հայրանին, որ աւելացնում է այդ տան շուքը և պատիւը։ Բայց ուր է Չախոյի տունը. լսեցէք թող հեղինակը պատմի.

«1879 թուին տեսայ նրա թոռները—ասում է նա—որ ասեղ ու թել չունէին պատառոտած շորերը կարելու, այլ պատառուածներու ծայրերն իրար կապած էին»։ Դէ՛ այժմ գնացէք թատրոն և նայեցէք «Փարիզու աղքատների» ներկայացմանը դուք ամենքդ, որ սիրում էք տաք դահլիճում երաժշտութեան ձայների ազդեցութեան տակ գրգռիչ և զուրեկան վիշտ զգալ։

Չախօն նահապետ էր, խաղաղ խաշնարած և նրա զէնքը միայն արօրն էր, բայց Բագրևանդը ունեցել է և իւր հերոսները, իր զինուորները, որոնք հայ առևանդուած աղջկան համար իրենց կեանքը վըտանգի են ենթարկել, որոնք կորզել են անօրէնի ձեռից հայ կնոջ պատիւը։ Չախոյի պատմութեան հետեւում է Յովսափ հայազգի հերոսի պատմութիւնը, մի պատմութիւն, որ եթէ եւրոպական գրականութեան մէջ լինէր, այժմ դրամա դարձած լսվում կըլինէր բոլոր բեմերից։ Հասան-Խանի պատերազմների միջոցին պարսկաստանցի Յովսափը զինուոր էր պարսից բանակի մէջ Յովսափն այնքան էլ ազնիւ մարդ չէ, որովհետև «նրա միջոցով շատ գաղտնիքների հասու կը լինէին» պարսիկ խաները, «կիմանային օսմանեան զօրութեան չափ և ինչ-ինչ մոլութեան միջնորդ կըգործածէին։» Պարսիկ սարվազները հայ աղջիկներ էին բերել Ամադից խաների համար և Յովսափը ականատես էր լինում նրանց՝ այդ անմեղ զոհերի ծանր հոգեկան տանջանքներին։ Ահա խորամանկ Յովսափը, որ իրեն խելքը մինչև այժմ ծառայեցրել էր նրանց, սոսկալի խղճահարութիւնից գրգռուած այժմ իւր խորամանկութիւնը գործ է գըրծում նրանց դէմ, արբեցնում է գիշերապահներին, կտրում է խանի գլուխը և երկու հայ աղջիկներին փախցնելով հասցնում է Արագածի կողերի վրայ գտնուող Մաստարա գիւղը և նրանց պսակում երկու երիտասարդների հետ. իսկ ինքը կրկին վերադառնում է Ալաշկերտ և աղջըկանց ծնողներին ուրախացնում։ Նոյն այդ հերոսը գնում է կրկին Պարսկաստան իւր ընտանիքը բերելու և ճանապարհին սպանում է իր վրայ յարձակւող եօթն աւազակներին. . . Իսկ ինչ է մնացել այժմ Յովսափից. . «Նորա որդին զառամեալ վիճակի մէջ աղքատ և կուրացած։» Եւ այս առասպել չէ, հէքեաթ չէ, այլ «իրական պատմութիւն է այս», հարցուցէք Ամադցիներէն։» Բայց մենք առաջ բերինք այստեղ միայն այդ պատմութեան կմախքը, իսկ նրա գեղեցկութիւնը և բնականութիւնն զգալու համար թող ընթերցողը կարդայ պ. Ս. Հայկունու գիրքը, ուր դրա նման բազմաթիւ սքանչելի նիւթեր կը գտնի և այդ նիւթերը կարող են փայլուն երկերի փոխուել տաղանդաւոր դրամատուրգների և վիպագիրների գրչի տակ։

(Վերջը հետևեալ համարում)

կան գրականութեան մէջ նրա բռնած դիրքը շեշտելուց յետոյ՝ Կէմանսօն լուսաբանում է առ հասարակ գրագէտ մարդու հասարակային մեծ կոչումը։ Գրագէտը ուսումնասիրելով իւր ժամանակակիցներին, ազգիւ զգացմունքներ, մարդասիրական լայն գաղափար զարթեցնելով երրանց մէջ, դրանով իսկ նպաստում է մարմնացնել կեանքում այդ զգացմունքներն ու գաղափարները։ Նա դրդում է իւր ժամանակի մարդկանց յառաջ դիմել, ոգևորում է նրանց կռուի միջոցին, սփոփում է պարտութեան րոպէին, թոյլ չէ տալիս անձնատուր լինել անօգուտ լքման և տանում է դէպի յաղթութիւն։ Մի այդպիսի գործի մասնակցելն, այդպիսի մեծ պաշտօնին գէթ մի օր, մի ժամ ծառայելն արդէն բաւական է, որ մարդս իւր ժամանակակիցների յարգանքը վայելէ։ Այն ինչ Գօնկուրն իւր ամբողջ կեանքի ընթացքում այդ տեսակ աշխատաւորների առաջին շարքումն է կանգնած եղել և շատ է նպաստել իւր հայրենիքի յառաջդիմութեան։ Այս է «Justice»-ի խմբագրի արտասանած երկար ճառի հաւատութիւնը, ճառի, որ մի քանի անգամ միաբան ծափահարութիւններով ընդհատվում է։

Կէմանսօից յետոյ Զօլան է դիմում Գօնկուրին. «Ես կարող եմ միայն առաջարկել ձեզ իմ երեսնամեայ բարեկամութիւնը, սկսում է նա շատ յուզուած ձայնով։ Երեսուն տարի առաջ ես նուիրեցի ձեզ «Germinie Lacerteux»-ի առթիւ իմ առաջին յօդուածը։ Երեսուն տարի առաջ ես իբրև մի երիտասարդ և ոգևորուած թատրոնասէր ներկայ էի ձեր «Henriette Maréchal»-ի ներկայացման։ Եւ այդ երեսուն տարիների ընթացքում որքան յիշատակներ, ինչ անընդհատ պատերազմ, որքան յաղթանակներ և գեղարուեստական վեհ վայելքների քանի քանի ժամեր ենք ունեցել միասին։ Մենք չորս էինք թուով։ Մեր թանկագին և մեծ Ֆլոբէրն արդէն վաղուց հանգչում է գերեզմանում և մեր նախկին ընկերական շրջանից — այժմ Դոդէն և ես ենք ցնծութեամբ տօնում ձեր տօնը։

«Արդէն լրանում է մեր միաբան գրականական գործունէութեան երեսունամեակը. բայց և այնպէս՝ ամեն գարշ թշնամանքներին հակառակ՝ մենք շարունակում ենք ձեռք ձեռքի տուած յառաջ գնալ և ողջունում ենք ձեզ, իբրև մեր փառաւոր եղբայրներից մէկին, որին պարտական ենք մեր զարգացումը։ Խմում ենք ձեր եղբօր կենացը, որ իմ հին ընկերն էր, խմում ձեր կենացը, խմում 'ի յարատեւութիւն ձեր փառքի»։

Ահա և «Տարտարէնի» հեղինակի փոքրիկ ճառը։ Նա թոյլատրութիւն խնդրեց նստած խօսել, ասելով թէ նստած տեղից նա աւելի պարզ և ջերմ կերպով կ'արտայայտէ իւր ասելիքն և դա աւելի պատշաճ կը լինի իւր և յօբելարի մտերմական բարեկամութեան։ Այդ բարեկամութիւնն սկսուել է քսան տարի առաջ։ «Իմ կողմից դա սկսուեցաւ,—շարունակեց Դոստէն, դիմելով տօնի հերոսին,—մի միամիտ երկրպագութեամբ մեծ հեղինակի առջև, որ էիք արդէն մեր հանդիպումից շատ առաջ։ Իսկ դուք, ձեզ յատուկ պարզ և բարեհամբոյր քաղցրութեամբ էիք վերաբերվում դէպի նոր սկսող գրագէտը, որ իւր ծաղրասէր ոգով, իւր վառվռուն և յափշտակուող բնաւորութեամբ յիշեցնում էր ձեզ ձեր եղբօր անմոռանալի և թանկագին պատկերը։ Ո՜հ, Գօնկուր, դուք ինքներդ լաւ գիտէք, թէ ինչ էին մեզ համար Մուրիլիո փողոցի կիրակի օրերը, երբ մենք հաւաքվում էինք չորս հինգ հոգի Ֆլոբէրի փոքրիկ սալօնում... Բայց հերիք է։ Զօլան այնպէս պարզառ կերպով յիշեցրեց մեզ մեր գրականական աշակերտութեան այդ սքանչելի րոպէները, որ հարկադրեց իւր սրտի հետ միասին թնդալ իմ սրտին, իսկ ինձ՝ գրեթէ նոյն շարժմունքներն անել շրթունքով, ինչ որ անում էր նա ինքը»։ Ի վերջոյ Դոդէն առաջարկեց յարեւշատութիւն Գօնկուրի, իբրև իւր հին և հաւատարիմ բարեկամի, իբրև մի սրտագին և վերինաստիճանի ներողամիտ մարդու, որ չնայելով իւր թափանցիկ մտքին՝ միամիտ է և անենասպառիկ գրգռութեան միջոցին անգամ ընդունակ չէ իւր խղճի առջև մեղանչելու,—յարեւշատութիւն այն անձի, որ սկսած Ժան Ժակի օրերից առաւել քան որ և է ֆրանսիացի գրագէտ սիրել է ճշմարտութիւնը և միշտ դրան հետամուտ եղել»։

Խոր զգածուած Գօնկուրը շատ կարճ պատասխանեց այդ բոլոր ճառերին։ «Թանկագին բարեկամներ,—ասաց նա,—ես տասն բառ անգամ չեմ կարող ասել տասն մարդուց բաղկացած հասարակութեան առջև,—մինչդեռ դուք շատ աւելի էք. ուստի ես միայն մի քանի խօսքով շնորհակալութիւն կը յայտնեմ ձեր ուշադրութեան համար և կ'ասեմ ձեզ, որ այս երեկոն վարձատրում է ինձ շատ և շատ վշտերի փոխարէն, որ կրել եմ գրական կանական ասպարէզիս ընթացքում։ Դէր ձեալ շնորհակալ եմ ձեզնից»։

Այս խօսքերը կնքուեցան միաբան և երկարատև ծափահարութիւններով։

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՓՐԱՆՍԻԱ.—Յայտնի է որ Գերմանիան ամենայն քաղաքավարութեամբ հրաւիրեց Ֆրանսային մասնակցել Բերլինում կայանալիք միջազգային գեղարուեստական ցուցահանդիսին։ Առաջին անգամ այդ հրաւէրին մեծ քաղաքավարութեամբ պատասխանեց ֆրանսիական մամուլը, բայց վերջերս սկսեցին այդ մամուլի մի քանի օրգանների մէջ շովինիստական ձայներ լսուել, որոնք յանուն հայրենասիրութեան պահանջում են չմասնակցել այդ ցուցահանդիսին, բայց հաղիւ թէ այդ լրագրների ձայները նշանակութիւն ունենան, մանաւանդ որ Բիբօն իր վերջին ճառի մէջ խօսում է դրացի ազգերի բարեկամութեան անհրաժեշտութեան մասին։

«ԱՐՁԱԳԱՆՔԻ»

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

« ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԵՌԱԳՐԱԿԱՆ »
ԴՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻ

Մարտի 1-ից.

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.— Երեկ տեղի ունեցաւ Մեծ Իշխան Ալէքսէյ Միխայլովիչի թաղումը Պետրոպավլովսկու տաճարում։ Թաղմանը ներկայ էին թագաւոր կայսրը, Մեծ Իշխանուհիք և Մեծ Իշխանները։ Հանգուցեալ Մեծ Իշխանը թաղուեց Մեծ Իշխանուհի Օլգա Ֆէոդորովնայի գերեզմանի հետ մի գծի վրայ։

Բարձրագոյն հրաման է հրատարակուած, սահմանափակել հրէայ աշակերտների թիւը Օդեսայի առևտրական դպրոցում։

ԼՕՆԴՕՆ. — Պեկինից հաղորդում են, որ Չինաստանը համաձայնուել է խաղաղութեանց բանակցութեանց ծրագրի մէջ ձգել հետևեալ կէտերը.— Կօրէայի անկախութիւնը, հողային զիջումներ և դրամական վարձատրութիւն։

Հայ-Չէնդից հաղորդում են. ճափոնացիք յարձակուել են Դէնշօդայի մօտ չինաց բանակի վրայ, որ բաղկացած էր 7000 հոգուց և ունէր 30 թնդանօթ. երկու ժամուան կռուից յետոյ չինացիք փախել են թողնելով պատերազմի դաշտում 1400 մեռածներ և վիրաւորածներ։ Ճափոնացիք կորցրել են միայն 10 մարդ։

ԲԵՐԼԻՆ. — («Վոլֆ») Պրուսական պետական խորհրդի նիստը բացուեցաւ կայսեր ճառով, որի մէջ նա ասաց թէ երկրագործական դժուար դրութեան շարունակութիւնը կառավարութեան վրայ պարտք է դնում միջոցներ գտնել հողի բերրիութիւնն աւելացնելու կուլտուրան բարուօքելու և ժողովրդին սպառնացող դժբախտութեան առաջն առնելու համար։ Կայսրը գոհ կը մնայ, եթէ խորհուրդը կրձևակերպէ իւր առաջարկութիւնները այնպէս, որ նրանց կարելի լինի իրագործել յօգուտ երկրագործութեան առանց վնաս հասցնելու միւս կողմերին, և չխախտէին օտար պետութեանց հետ կապած դաշնադրութիւնները։

ԲԵԼԳՐԱԴ.— Աւստրիական ցէնզուրան թոյլ չէ տալիս Սէրբէվում հրատարակուող գրական «Բօսանիկա Վիլլա» ամսագրին տպագրել այն յօդուածները, որոնք ուղարկվում են Սերբիայից, թէև նոյն իսկ բացառապէս գրական բնաւորութիւն ունենան։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 1 մարտի. — Այսօր տեղի ունեցաւ երկրորդ ներքին փոխառութեան տանող վիճակահանութիւնը, որի ժամանակ շահել են հետևեալ տոմսակները.

200 հազար ռ.—119/28, 75 հազար ռ.—9313/37, 40 հազար ռ.—14044/32 25 հազար ռ.—1461/30, տասն հազար ռ. — 17737/38, 15764/12, 5274/36, ութն հազար ռ.—14973/36, 15700/37, 421/2, 17505/24, 12046/32, հինգ հազար ռ.—2042/5, 15379/37, 308/15, 14844/50, 9488/31, 9682/44, 16605/27 18506/11 մի հ. գ. ռ.—2138/32, 12525 /19, 13767/31, 13372/40, 1312/45 3756/9, 19823/26, 1406/34, 12660/15, 5667/33, 4365/10, 18279/5, 1423/44, 18297/18, 4967/26, 1248/25, 8796/45, 4744/47, 5566/33, 11027/38.

ԶԱՆԱԶԱՆ

„Nevvspaper press directory“ հետևեալ հետաքրքրական վիճակագրական տեղեկութիւններն է տալիս մամուլի գրութեան մասին Մեծ-Բրիտանիայում։ Ամբողջ միացեալ թագաւորութեան մէջ այժմ հաշվում է 2304 լրագիր։ Դրանցից միայն Անգլիային բաժին է ընկնում 1798, որոնցից միայն 456 ը լոյս են տեսնում Լօնդօնում. Շոտլանդիայում հաշվում է 217 պարբերական հրատարակութիւններ, Իրլանդիայում 168, Վալլսում 98 և վերջապէս 23 մօտակ կղզիների վրայ։

Ամենօրեայ թերթերը այսպէս են հաշուած՝ 152 անգլիական, 19 շոտլանդական, 18 իրլանդական, 7 Վալլսում և 2-ը կղզիների վրայ։ Այս թուանշաններից երևում է որ Բրիտանական մամուլի օրգանների թիւը վերջին կէս դարի ընթացքում չորս անգամ աւելացել է։ Մանաւանդ աւելացել է հատ ամսագրների թիւը—ոչ պակաս քան 10 անգամ. դրանց թիւն ամբողջ միացեալ թագաւորութեան մէջ հասնում է 208 ի, որոնցից 487 բուն կրօնական են։

„Մակեդոնիա“ լրագրի մուտքը Տաճկաստան արգելուած է, այդ լրագրի միայն անուան պատճառով։

Խմբագիր-Հրատարակիչ՝
ԱՐԴՈՒՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ
(Կուկկա, Վօրօնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիւրակի օրերից.

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան սիֆիլիսի և վեներական հիւանդութիւնների։

Ն. Մ. ԶԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի ներքին և նեարդային հ.

Ի. Գ. ՐՈՒԲԻՆՈՎԻՉ—10—11 ժամը ներքին, երեխայոց և կանանց հ.

Կին-բժիշկ ՏՈՒՐԲՈՎԻՉ—11—12 ժ. կանանց հ.

Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍՈՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ.

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՒՆԵՐԸ՝

Ա. Գ. ԴՈՒՐԿՈ—6—7 ժ. Սիֆիլիսի, մէզի ու սեռական օրգանների հ.

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—7—7½ ժ.

Ա. Գ. ԴՈՒՐԿՈ քիմի-խոշորացուցական հետազօտութիւն է անում մէզի, խոխի, արեան, կաթի և ացխ։

Վճար 50 կ. համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցումը ընդունում են և Գ. ՊԵՏՐՈՍԻԿ ՀԻՒԱՆԴՆԵՐ.

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Ն. [illegible]։

ԲԺՇԿԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԱՐԱՆ
ԲԺՇԿ. ԴՈԿՏՕՐ
ԱԻԵՏԻՔ ԲԱԲԱՅԵԱՆԻ

Սօլօլակ, Սերգիևսկի փողոց № 14.

Բացի դեղերից գործադրվում են նաև զանազան տեսակ ՋՐԱԲՈՒԺԱԿԱՆ, ԵԼԵՔՏՐԱԲՈՒԺԱԿԱՆ և այլ ֆիզիքական սեթօդներ։

ՆԵՐՔԻՆ և ՆԵՐՔԻՆԱՑԻՆ ՀԻՒԱՆԴՆԵՐ

ընդունվում են ամեն օր (բացի կիւրակի և տօն օրերից)

12½—1½ ժ. ցերեկը } կենաքմատներ և երեխաներ
1½—2-ը ժ ցերեկը և 7-ին ..օտ երեկոյեան } տղամարդիկ։

Ընդունարանում գտնվում են որոշեալ ժամերում մանկաբարձ — մասսաժանող կին և մասսաժիստ պարոն։

Քաղաքային հիւանդանոց

(Մուլբարեանեան փ., տ. Կուզանեանի, № 15. հիմնել են Թիֆլիզի քաղաքացիները երթևեկ հիւանդների համար 1866 թ. ապրիլի 4-ի յիշատակին)։

Հիւանդների ընդունելութիւն ամեն օր, բացի կիրակի օրերից, ձմեռն առաւօտեան ժամը 9—1, ամառը (յունիսի, յուլիսի և օգոստոսին) առաւ. ժամը 8—12.

Վ. Մ. Աբեղեան — ներքին, երեխանց և ջղային հիւ. ժամը 10½—12 ամեն. օր։

Ղ. Ա. Ղուկասեանց—ներքին և երեխանց, ժ. 10½—12 ամեն օր։

Դ. Գ. Գալուստեանց—խիրուրգ. և մէզի անդ. ժ. 12—1 ամեն օր։

Բժշկուհի Գ. Քալանթարեանց. սիֆիլիս և մէզի անդ. հիւանդ. 11—12 ամեն օր։

Մ. Ա. Մէլիքսէթեան—ներքին և վեներական, ժ. 12—1 ամեն օր բացի հինգշաբթի։

Բժ. Մ. Զահրեբեան—ներքին հիւանդութիւն. 12—1 ամեն օր.

Բժ. Գեղամի — ներքին և երեխանց հիւանդ. 12 1 ամեն օր։

Կին-բժ. Մ. Ա. Խաչատուրեանց—կանանց ժ. 9—11 ամեն օր։

Ն. Գ. Կարապետ — ներքին և երեխանց, ժամը 11—12 ամեն օր։

Կին-բժ. Լ. Ե. Մելիքսէթեանց—կանանց, ժամը 11—12 ամեն օր։

Ե. Ա. Ռոստոմ—ներքին, երեխանց և առամի, ժամը 9—10 ամեն օր։

Մ. Ա. Ռեխպուտեան—ներքին և ջղային, ժամը 11—12 ամեն օր։

Գ. Ն. Սարգսեան—ներքին, մէզի անդ. և վեներական, ժամը 12—1 ամեն օր։

Գ. Ա. Թորոսեան — ներքին և խիրուրգ., ժ. 12—1 ամեն օր։

Կին-բժ. Ս. Ա. Զէյթունցյան—աչքի և կանանց, ժամը 12—1 ամեն օր։

Ատամ. բժ. Ա. Ս. Ադէլեան—ատամներ ժամը 10—11 ամեն օր։

Կոնսուլտասիոնը երեքշաբթի և ուրբաթ օրերը ժ. 12—1։ Ծակի պատառատումն—չորեքշաբթի և շաբաթ օրեր ժամը 9—1։

ՀԱՒԼԱԲԱՐԻ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

(Կախէթինսկայա փ., տ. Ցէրտէրեանի)

Մ. Ա. Քալանթարեան—ժամը 11—12 ամեն օր։

Կին-բժ. Մ. Ա. Խաչատուրեան—կանանց, ժ. 11—12 երեքշաբթի և ուրբաթ օրերը

ԹԱՐԳՈՒԹԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

(Քանինա վօրօտա, տ. Ինֆիլաճանի)

Գ. Բ. Ցէր-Աստուածատուրեան—ժամը 11—12 ամեն օր։

Կին-բժ. Մ. Ա. Խաչատուրեան—կանանց, ժ 11—1 երեքշաբթի և ուրբաթ օրերը։

Ծանուցանում.— Աղքատ անձերին բոլոր բժշկական խորհուրդ և դեղեր տրւում են ձրի։

Քաղաքային բուժարանի կառավարիչ՝—
Գ. ՍՏԵՓԱՆԵԱՆ

Ընդրկովկասեան երկաթուղի

Մարդատար գնացքը Թիֆլիզից Բաթում դուրս է գնում առաւօտեան ժ. 9-ին 30 ր. և Բաթում հասնում է երեկոյեան ժ. 9-ին 45 ր.։

Փոստային գնացքը Թիֆլիզից Բաթում դուրս է գնում ցերեկուայ ժ. 1-ին 10 ր. և հասնում է Բաթում առաւօտեան 7 ժ. 30 ր.։

Փոստային գնացքը Թիֆլիզից Բաթում դուրս է գնում երեկոյեան ժ. 6-ին 50 ր և Բաթում հասնում է առաւօտեան ժ. 8-ին 15 ր.։

Մարդատար գնացքը Բաթումից Թիֆլիզ դուրս է գալիս առաւօտեան ժ. 9-ին 40 ր. և Թիֆլիզ հասնում է երեկոյեան ժ 9-ին 55 ր.։

Փոստային գնացքը Բաթումից Թիֆլիզ դուրս է գնում գիշերուայ ժ. 11-ին 20 ր Թիֆլիզ է հասնում ցերեկուայ ժ. 12-ին 25 ր.։

Փոստային գնացքը Բաթումից Թիֆլիզ դուրս է գալիս գիշերուայ ժ. 11-ին 5 ր. և Թիֆլիզ հասնում է ցերեկուայ ժ. 5-ին 50 ր.։

Ապրանք-մարդատար գնացքը Թիֆլիզ Գանձակ դուրս է գնում երեկոյեան 7 ժ. 27 ր. հասնում է Գանձակ առաւօտեան 7 ժ. 40 րոպէին։

Ապրանք-մարդատար գնացքը Գանձակից Թիֆլիզ դուրս է գալիս երեկոյեան 6 ժամին. հասնում է Թիֆլիզ առաւօտուայ 7 ժ. 35 րոպէին։

ՓՕՍՏԱՅԻՆ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆԸ
ՎՐՈՑ ՊՈՏԵՐԲԱԶՄԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀ։

Թիֆլիզից՝ հինգ հոգու տեղ ունեցող կառքը ուղևորվում է առաւօտեան 8 ժամին, գիշերում է Մէլէթի կայարանում, Վլադիկավկազ է հասնում հետեւեալ օրը ժամը 7-ից մինչև 8 ը երեկոյեան։

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) ուղևորվում է կէսօրից յետոյ ժամը 3-ին և առանց գիշերուան հասնում է Վլադիկավկազ հետեւեալ օրը ժամը 7-ից մինչև 8-ը երեկոյեան։

Վլադիկավկազից՝ հինգ հոգու տեղ ունեցող կառքը ուղևորվում է առաւօտեան ժամը 8-ին, գիշերում է Մէլէթի կայարանում, Թիֆլիզ է հասնում հետեւեալ օրը ժամը 7-ից մինչև 8 ժամը երեկոյեան։

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) ուղևորվում է կէսօրից յետոյ ժամը 3-ին և առանց գիշերուան հասնում է Թիֆլիզ հետեւեալ օրը ժամի 7-ից մինչև 8 ժամը երեկոյեան։

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀՈԳԵՆԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ամեն շաբաթ շոգենաւերի երթևեկութիւն Բաթումի, Օդեսայի եւ Կ. Պոլսի միջեւ։

Բոլորից դուրս է գնում.

Շաբաթ օրերը (լոյս կիրակի գիշերուա 3 ժ.) շրջանառու ընթացքով բոլոր նաւահանգիստները։

Կիրակի օրերը, 12 ժամին, ուղիղ ընթացքով. Նովորօսիսկի, Կերչի, Թէոդոսիայի, Նալտայի, Սեւաստապօլի և Եւպատորիայի վրայով.

Երեքշաբթի օրերը լոյս չորեքշաբթի գիշերուայ 2 ժամին, պարանքա մարդատար շոգենաւը բոլոր նաւահանգիստները։

Հինգշաբթի օրերը—լոյս հինգշաբթի, գիշերուայ 3 ժամին, շրջանառու ընթացքով բոլոր նաւահանգիստները։

Օրեստյեկ գալիս է Բաթում։

Երկուշաբթի օրերը—առաւօտեան, ուղիղ ընթացքով.

Հինգշաբթի և Ուրբաթ օրերը—երեկոյեան, շրջանառու ընթացքով.

Երկուշաբթի օրերը—գիշերուայ 2 ժամին, պարանքա-մարդատար շոգենաւը, շրջանառու ընթացքով.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լոյս տեսան
ՍԱՐԿ. Յ. ՃՈՒՂՈՒՐԵԱՆԻ
«ՄՈՌԱՅՈՒԱԾ ԱՇԽԱՐՀ»-Ի

Ա. և Բ. գրքերը։ Վաճառվում են Կենդր և Կովկասեան գրավաճառանոցներում, Մակար Զմշկեանի և ինձ մօտ։

Ա. գիրքն արժէ 60 կոպ. Բ. 50 կ., միասին 1 ռուբլի։ Միմիայն Ա-ից գնողներին հարիւրին զիջվում է 30%
երկրորդին . . . 20%

Հասցէս՝ Тифлисъ, Николаевская ул., д. Алелова № 10.

3—1 Սարգ. Յ. Ճուղուրեան։

Զուտով մամուլի տակ կը մտնի Մրնա ։հ. Տէր-Պետրոսեանի թարգմանութեամբ «ՎԱՂԸՐ ՓՈՐՓԵՅՈՒ» պատմութիւնը աշխարհաբար լեզուով։

(3—3)

ՀԱՇՈՒԷԿՇԻՌ
ԹԻՖԼԻԶԻ ՓՈԽԱԴԱՐՁ ՎԱՐԿԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
31-ն Փետրվարի 1895 թ.

ՊԱՀԱՆՋՔ			
I Դրամարկղ		48,442	30
II Ընթացիկ հաշիւ Պետ. բանկ. ք.		3,855	83
III Զեղջումն (Disconto) մուրհակաց երկու ստորագրութեամբ		2,834,385	70
IV Զեղմ. տոկ. թղ. կտրօնների և այլն		21,667	92
V Զեղջումն սօլօ—մուրհակների գրաւականով			
ա) պետութեան ոչ ապահովեալ արժեթղթերի	230,437—		
բ) ապրանքների	20,550—		
գ) անշարժ կալուածքների	134,580—	385,567	—
VI Փոխատուութիւն գրաւականով			
ա) Պետութեան ապահ. տոկ. թղ.	451,830—		
բ) « ոչ « «	20,180—		
գ) ապրանքների	— —		
դ) Ոսկւոյ և արծաթի		472,010	-
VII Առանձնական ընթացիկ հաշիւներ		1,197,858	18
VIII Պահեստի դրամագլխին պատկ. տոկոս. թղթեր		149,482	95
IX Ընկերութեան պատկանեալ արժեթղթեր		50,504	57
X Թղթակիցներ՝			
ա) Նոցա հաշիւը (Loro)	222,743 27		
Ընկերութեան հաշիւը (Nostro)	2,237,144 46	2,459,897	73
XI Բողոքուած մուրհակներ		8,385	—
XII Պայմանաժամ. անցուցած փոխատ.		— —	—
XIII Մուրհակի և դրոշմակիր թղթեր.		3,215	40
XIV Ընթացիկ ծախսեր		7,159	51
XV Յետ ստացուելիք ծախսեր		6,882	40
XVI Կահ կարասիք և սկզբն. ծախսեր		3,677	37
XVII Ընկերութեան վրայ մնացած անշարժ կայք.		26,419	16
XVIII Փոխանցիկ գումարներ		18,525	43
	Ր. Ա.	7,697,926	45

ՊԱՐՏՔ			
I Հիմնական դրամագլուխ.	1,000,850 —		
II Պահեստի դրամագլուխ	155,331 41	1,156,181	41
III Օժանդակութեան դրամագլուխ ծառայողների համար		10,182	12
IV Դրամական աւանդներ՝			
ա) Ընթացիկ հաշուով հասարակ	564,688 31		
բ) « « պայմանաւոր	395,656 12		
2) Պայմանաժամով՝			
ա) Ընկերութեան անդամներից	203,874 —		
բ) Օտար անձինքներից	1,498,643 56		
3) ցպահանջ			
ա. Ընկերութեան անդամներից	3,502 80		
օտար անձինքներից	381,343 85	3 047,688	64
V Պետ. բանկ. զեղջ. մուրհակներ		258,317	88
VI Մասնաւոր ընթացիկ հաշիւ պետ. բան. մուրհակներով		66,894	64
արժեթղթերով		— —	—
VII Ընկերութ. փոխադրութեամբ ստացած հասանելի գումարներ		150,690	45
VIII Թղթակիցներ			
ա) Նոցա հաշիւը (Loro)	57,067, 07		
բ) Ընկերութեան հաշիւը (Nostro)	2,589,918 90	2,646,985	97
IX Ը վճարուած դիվիդենդ		12,749	94
X Ը վճարուած տոկոսներ աւանդների և ընթաց. հաշիւների.		50,211	73
XI Փոխանցիկ գումարներ		22,073	77
XII Հանումներ ըստ 16-րդ յօդ. տրամադր.		34,736	64
XIII Ստացուած տոկոսներ և յանձնարարականներ		72,384	68
XIV 5% պետական հարկ դրամագլխներից		5,928	62
XV Զուտ արդիւնք 1893		162,899	96
	Ր. Ա.	7,697,926	45

Дозволено цензурою Тифлисъ 2-го Марта, 1895 года. Տպարան Յ. Մարտիրոսեանցի Типографія И. Мартиросіанца, на Орбел. ул., № 1—2